16 ՆՈՅԵՄԲԵՐ 2012 ՈՒՐԲԱԹ 204(5056)

# Ազգ
Azg

ISSN: 1829-1651

## Պաղեստինցիների պատասխան գործողությունները խուճապ են առաջացրել Իսրայելում

*Նաթանյահուի կառավարությունը հիմա արդեն ոչ թե Գազայում ռազմական գործողություններն է ընդլայնում, այլ շտապում է հրադադարի*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

**Նոյեմբերի 13-14-ին Իսրայելի ռազմաօդային ուժերը ռմբակոծել են Գազայի հատվածը, ինչի հետեւանքով զոհվել է 11 մարդ, 115-ը՝ վիրավորվել: Զոհվածների թվում է իսլամական դիմադրության շարժման՝ «Համասի» զորահրամանատարներից Ահմեդ ալ Ջաբերին: Այս հարձակումը բուռն հակազդեցություն է առաջացրել տարածաշրջանում:**

**Ծոցի համագործակցության խորհուրդը Իսրայելի վերջին հարձակումը բնութագրել է որպես բարբարոսության դրսեւորում եւ խստագույնս դատապարտել: Խորհրդի օրինակին է հետեւել Թուրքիայի արտգործնախարարությունը, որը Իսրայելի հարձակումների դադարեցման համար միջամտելու կոչ է արել ՄԱԿ-ին եւ համերաշխություն հայտնել Գազայի բնակչությանը:**

**Ռուսաստանը հարձակման առնչությամբ մտահոգություն է արտահայտել, ԱՄՆ-ն՝ ի դեմս պետքարտուղարի խոսնակ Մարկ Թոների, «Համասին» որակելով իբրեւ ահաբեկչական կազմակերպության, Իսրայելի ժողովրդի դեմ բռնություն գործադրելու պատճառաբանությամբ դատապարտել է այս կազմակերպությանը եւ ընդգծել Իսրայելի ինքնապաշտպանության իրավունքը:**

**ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունից հետո, Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուի ու Եգիպտոսի նախագահ Մուհամմեդ Մուրսիի հետ հեռախոսազրույց է ունեցել ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման, հանդես գալով պետքարտուղարի խոսնակին համահունչ դիրքերից:**

**Խնդիրը, ինչպես երեւում է, Օբամայի հեռախոսազրույցը չէ, այլ Իսրայելում Եգիպտոսի դեսպանին հետ կանչելու, Գազայի սահմանային «Ռաֆահ» անցակետը բացելու, ինչպես նաեւ արտակարգ նիստ հրավիրելու համար Արաբական լիգային եւ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին դիմելու նախագահ Մուրսիի գործելակերպը:**

**Հատկանշական է, որ մինչ Արաբական լիգան դրական էր արձագանքում Եգիպտոսի նախագահի կոչին, «Համասը» Իսրայելի հարձակումները դադարեցնելու համար նախաձեռնություն ցուցաբերելու խնդրանքով դիմում էր Թուրքիային, իսկ Իզեդդին ալ Քասսամի բրիգադները վրեժխնդրության երդում էին ընդունում, վարչապետ Նաթանյահուն հայտարարում է Գազայում ռազմական գործողությունները ընդարձակելու իսրայելական բանակի պատրաստակամության մասին: Նրան «Գազայի դեմ ցամաքային գործողություններին անցնելու» վերաբերյալ հրապարակումներով լրացնում է իսրայելական մամուլը: Այդ ընթացքում Իսրայելի պաշտպանության նախարար Էհուդ Բարաքը հայտարարում է, որ Իզեդդին ալ Քասսամի հրամանատարներից Ահմեդ ալ Ջաբերիի սպանությունն ընդամենը նախերգանք է, հետեւաբար հարձակումները օրերով պետք է շարունակվեն:**

*Տես էջ 5*

## Գնացքը գնացել է առաջ... նրանք պիտի վազեն, որ հասնեն գնացքին

Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

«Այնպիսի տպավորություն է, որ այդ հայտարարությունն անողը մնացել է 90-ական թվականների կեսերի իր ունեցած տեղեկություններով, եւ փորձում է ներկայացնել Ադրբեջանի դիրքորոշումը՝ ասելով, որ դա այն է, ինչ որ եղել է 1995 թվականին», այսպես է արձագանքել երեկ Հայաստանի արտգործնախարար **Էդվարդ Նալբանդյանը**՝ Լատվիայի ԱԳ նախարար Էդգարս Ռինկեւիչսի հետ համատեղ ասուլիսում արձագանքելով Ադրբեջանի ԱԳ նախարարի տեղակալի վերջին հայտարարության մասին հարցին:




Ադրբեջանի արտգործնախարարի տեղակալը հայտարարել էր, որ իր երկիրը առաջարկել է Ղարաբաղյան խնդրի կարգավորման ճանապարհային քարտեզ, որը, այսպես ասած, փուլային տարբերակն է եւ կրկնում է դեռեւս 90-ական թվականներին շրջանառության մեջ դրված տարբերակը: Պատրաստվո՞ւմ է արդյոք Հայաստանը ներկայացնել սեփական մշակած ճանապարհային քարտեզը:

«95 թվականից մինչ այսօր արդեն 15-17 տարի անցել է, գնացքը գնացել է առաջ, իսկ որոշ մարդիկ Ադրբեջանում մնացել են կայարանում: Կարծում եմ, նրանք պիտի վազեն, որ հասնեն գնացքին, որովհետեւ գնացքը շարժվում է առաջ», նշել է Նալբանդյանը: Նրա խոսքերով՝ միջազգային հանրության կողմից կա ճանապարհային քարտեզ, որը առաջարկվել էր Կազանում, «խոսքը Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման հիմնարար սկզբունքների մասին է, որոնք առաջարկվել էին եռանախագահող երկրների կողմից»:

*Տես էջ 2*

## ՀԱՄԱՌՈՏ

### Փլուզվել է Վարդենիսի երկաթգծի կամուրջը

**Շինարարական աշխատանքներ կատարելու ժամանակ երեկ փլուզվել է Վարդենիս քաղաքից 2 կիլոմետր դեպի հյուսիս գտնվող երկաթգծի կամուրջը: Փլուզման հետեւանքով երկաթգծի 4 աշխատող մնացել է փլատակների տակ:**

**Գեղարքունիքի մարզի փրկարար ծառայության պետ Մարտին Բարսեղյանի փոխանցմամբ՝ տուժածներից երեքը զոհվել են, իսկ մեկը տարբեր կոտրվածքներով տեղափոխվել է Վարդենիսի հիվանդանոց, այնուհետեւ՝ Երեւանի առաջին կլինիկական հիվանդանոց: Պատահարի մանրամասները ճշտվում են:**

**Ի. Պ.**

### Նիկոլը՝ Սամվելին

**Երեկ Ազգային ժողովի էթիկայի հանձնաժողովի որոշումը, որ պատգամավոր Սամվել Ալեքսանյանը խախտել է պատգամավորական էթիկան, հրապարակեց հանձնաժողովի նախագահ Նիկոլ Փաշինյանը: Հանձնաժողովն այդ հարցը քննարկել էր ՀԱԿ ակտիվիստ Վարդգես Գասպարիի բողոքով: Հանձնաժողովը Արծվիկ Մինասյանի զեկուցմամբ քննել է եւ գտել, որ հունիսի 21-ին ԱԺ Դեմիրճյան մուտքի մոտ Վարդգես Գասպարիի ձեռքից Ս. Ալեքսանյանը նրա կամքին հակառակ խլել է պաստառը՝ խախտելով Գասպարիի սեփական կարծիք ունենալու եւ արտահայտելու իրավունքը: Դրանից հետո նրա թիկնապահը հրել եւ գետին է գցել Գասպարիին: Չնայած՝ հրողը բացատրություն է տվել, որ վարորդ կամ թիկնապահ չէ եւ ուզում էր հանդարտեցնել կռիվը:**

**Ս. Խ.**

### Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

Տարեգրություն՝ հայ, մասնավորապես Պարսկահայքի մշակութային պատմությունը ստեղծողների: Ալիս Նավասարդյանի (Կալիֆոռնիա) «Անմահները» պատկերագիրքը՝ Լիլիթ Երնջակյանի ներկայացմամբ:

Երեւանի քաղաքային ու մտավորական միջավայրի 50-ականները: «Նաիրի» կինոթատրոնը՝ այդ սերնդի մարդկանց համար. Ավիկ Իսահակյանի հուշագրություն-էսսեն:

Խորհրդածություններ Ամստերդամի Թագավորական «Կոնցերտգեբաու» նվագախմբի երեւանյան համերգից հետո: Մարինե Կարոյան. «Արթնացման եւս մի պատեհ առիթ»:

Ջեյմս Բոնդի՝ ամենանշանավոր կինոկերպարի ստեղծման 50-ամյակի առթիվ Հակոբ Ծուլիկյանի անդրադարձը:

Լեզվական ճշտումներ. հայերենը «Գրականագիտական հանդեսում», Նորայր Ղազարյանի արձանագրումները:

Մեր հանդիպումը վիեննահայ ռեժիսոր, պատմաբան Արտեմ Օհանջանյանի հետ:

**Ս. Բ.**

## Մերոնք ՆԱՏՕ-ում

**Հայաստանի խորհրդարանական պատվիրակությունը նոյեմբերի 10-11-ը Պրահայում մասնակցել է ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի նստաշրջանին, մասնավորապես՝ քաղաքական հանձնաժողովի նիստերին, այդ մասին երեկ լրագրողներին պատմեց պատվիրակության ղեկավար Կորյուն Նահապետյանը: «Արաբական գարունը եւ նրա հետեւանքները եվրատլանտյան անվտանգության առումով» զեկույցի քննարկման ժամանակ Կ. Նահապետյանը հարց է ուղղել զեկույցի այն կետի վերաբերյալ, որտեղ նշվել է, թե Ասադի վարչակազմը դեռ աջակցություն է ստանում ալավի եւ քրիստոնյա փոքրամասնություններից այն պատճառով, որ վերջիններս վախենում են միջկրոնական բռնություններից ու քաոսից. մեր պատվիրակության ղեկավարը տեղեկացրել է, որ Սիրիայում 100 հազար հայ է ապրում, սակայն նրանց մեծ մասը լքում է երկիրը, 46 հայ սպանվել է, 3000-ը արտագաղթել է Հայաստան, ինչին զեկուցողը պատասխանել է, որ տեղյակ չէր այդ ամենին եւ ի գիտություն է ընդունում ասվածը:**

**Հայկական պատվիրակությունը մի շարք աշխատանքային հանդիպումներ է ունեցել ՆԱՏՕ-ի տարբեր պաշտոնյաների հետ՝ ընթացիկ խնդիրներ քննարկելով:**

## Ի. Զախարյան. «Հիմա պետական միջոցները գողանում են գրագետ ձեւով»

Երեկ Ազգային ժողովում քննարկվում էր Հայաստանի Վերահսկիչ պալատի 2013 թվականի գործունեության ծրագիրը: **Իշխան Զախարյանը** նախ նշեց այն խախտումների ուղղվածությունները, որոնք տիպական են եղել հինգ տարվա վերահսկողության արդյունք որպես, վեր հանված 154 հաշվետվություններում, խախտումները որպես կանոն լիազորությունների կենտրոնացման, թույլ հսկողության, անձնական անպատասխանատվության, շահերի բախման եւ մի շարք այլ արատավոր դրսեւորումների հետեւանք են, ոլորտները՝ գնումների, քաղաքաշինական, սեփականաշնորհման ծրագրերում են, պետական գույքի վատ կառավարման, վարկային միջոցների անարդյունավետ օգտագործման արդյունք, առողջապահության, սոցիալական եւ այլ ոլորտների խոցելիության միջավայրում:



«Ատկատները», արհեստական ուռճացումները եւ այլ մեքենայությունները ու խախտումները կասկածի տակ են դնում բյուջեի կատարելիությունը, ասում էր Ի. Զախարյանը՝ խոսելով օրինակներով, որ լավ հասկանալի լինի, ու նշելով, որ հիմա պետական միջոցները գողանում են գրագետ ձեւով՝ չնշելով գնումների ենթակա ապրանքների գները եւ այլ հնարավոր սողանցքներ օգտագործելով: Ի. Զախարյանը նշեց, որ եկող տարի ՎՊ-ն ստուգելու է «Խոսրովի անտառ» արգելոցի ու բնապահպանական տեսչության աշխատանքը, Հայաստանի նախագահի, ԱԺ եւ վարչապետի աշխատակազմերին հատկացված միջոցները ու կառավարվող գույքը:

Շարունակելու են վերահսկել սահմանապահ ռուսական զորամասը (ՌԴ ՎՊ-ի հետ համատեղ), պետական գնումների ոլորտը, կրթական ու մշակութային օբյեկտների շինարարությունը, կենսաթոշակների համակարգը:

Պատգամավորները մի շարք առաջարկներ արեցին՝ ստուգումների մեջ ներառելու սոցիալական փաթեթի ներդրման ոլորտը, Հանրային հեռուստաընկերությունը, վնասով աշխատող «Երկաթուղի» ՓԲԸ-ն, հանքարդյունահանման ոլորտը:

**Ս. Խ.**

# Որքան հախուռն էին քննադատողները, այնքան մեղմ էր վարչապետը

Ազգային ժողովի փոխնախագահ **Հերմինե Նաղդալյանը** երեկ իր ելույթում մասնագիտական վերլուծությամբ փորձեց մեկ-մեկ հերքել 2013 թվականի բյուջեին ուղղված ընդդիմության քննադատության գլխավոր կռվանները՝ ՀՀԿ խմբակցության տեսակետը ներկայացնելով: Ըստ նրա՝ բոլոր միտումները դրական են եւ զարգացում ապահովող՝ «դիմակայել ենք, ամենադժվար մարտահրավերները հաղթահարել եւ բռնել զարգացման ուղին»: Նա ասում էր, որ չեն ուզեցել գնալ պոպուլիզմի՝ նախընտրական շրջանում աշխատավարձ բարձրացնելու ու տնտեսություն կործանելու ճանապարհով: Դե իսկ երեկ ՀՀԿ խմբակցության ղեկավար **Գալուստ Սահակյանն** արդեն ազդարարել էր, որ հպարտությամբ են քվեարկելու նոր բյուջեն:

«Ժառանգության» անունից **Ռուբիկ Հակոբյանը** առաջադրեց չորս ուղղություն, որոնց պատասխանները բյուջեում չէր գտել, այդ իսկ պատճառով էլ խմբակցությունը դեմ էր քվեարկելու, չնայած ներկայացրել է 75 առաջարկ:

Բյուջեի նախագիծը համարժեք չէ Հայաստանի առաջ ծառացած մարտահրավերներին եւ չի երաշխավորում երկրի անվտանգությունը, այս տեսքով բյուջեի նախագծին ՀՅԴ-ն դեմ է, սա էլ **Արծվիկ Մինասյանի** եւ ՀՅԴ-ի տեսակետն էր:

ՕԵԿ անունից **Հեղինե Բիշարյանը** մի շարք ոլորտների վերաբերյալ առաջարկներ արեց, որոնք ՕԵԿ-ն առաջնահերթ է համարում, բայց բյուջեին կողմ է քվեարկելու կոալիցիոն այս խմբակցությունը:

**Հրանտ Բագրատյանը** ՀԱԿ-ի անունից, մնալով իր հախուռն ոճի մեջ, շարունակեց պատգամավորական ելույթով սկսած ՀԱԿ-ի տեսակետի ներկայացումը՝ վերջում եզրակացնելով, որ այսպիսի բյուջե չի կարող լինել, ՀԱԿ-ը դեմ է:

ԲՀԿ խմբակցության տեսակետը նույնպես կոշտ էր: Մի շարք հիմնավորումներ բերելով իր տեսակետի համար՝ այն ներկայացնող **Նաիրա Զոհրաբյանը** գնահատեց, թե սա սողալու բյուջե է, ՀՀ քաղաքացին այս բյուջեով կարող է լավագույն դեպքում սողալ. «ԲՀԿ-ն շատ բարձր է գնահատում ՀՀ քաղաքացու արժանապատվությունը եւ չի քվեարկում նրա սողալու բյուջեին կողմ», ասաց:

Վարչապետ **Տիգրան Սարգսյանը**, սակայն, իր եզրափակիչ ելույթում զերծ մնաց ընդդիմադիրների ոգով նրանց պատասխանելու գայթակղությունից: Նա շնորհակալություն հայտնեց շահագրգիռ եւ օգտակար քննարկումների համար, ընդունելի քննադատություն համարեց կայուն զարգացման ծրագիր մշակելու անհրաժեշտության վերաբերյալը եւ հրավիրեց ընդդիմությանը՝ մասնակցելու այն փաստաթղթի քննարկմանը, որը մինչեւ 2025 թվականը մատնանշում է բոլոր ցուցանիշները եւ նախատեսում է արմատական փոփոխություն կառավարության քաղաքականության մեջ, որտեղ անցում է կատարվել մակրոտնտեսական կայունության ապահովման համակարգից դեպի ճյուղային արդյունաբերական քաղաքականության պարտավորության ստանձնումը, նաեւ՝ գյուղական վայրերում աշխատատեղերի ապահովումը: Սոցիալական ոլորտում էլ այսուհետեւ ոչ թե հետեւանքների, այլ աղքատություն ծնող պատճառների դեմ է պայքար ծավալվելու:

Վարչապետը շնորհակալություն հայտնեց ՀՅԴ-ին՝ կառավարության խորհրդակցությանը մասնակցելու համար, եւ նշեց, որ ընդունելի են նրանց առաջարկությունները. «Մենք կենտրոնանալու ենք երկու-երեք գերակա խնդիրների վրա եւ համաձայն ենք ձեր առաջարկությանը, որ մոնիտորինգի հանձնաժողովում պետք է ներկայացված լինեն ընդդիմության ներկայացուցիչները՝ ՀՅԴ առաջարկը, պաշտոնապես տեղյակ եմ պահում, ընդունվել է: Մոնիտորինգի հանձնաժողովում տեղերի մեկ երրորդը հատկացվելու է ընդդիմությանը, հասարակական կազմակերպություններին, որոնք ունեն ընդդիմադիր կեցվածք, եւ մեկ երրորդը կներկայացնի կառավարությունը: Համոզված եմ, որ այս կեցվածքն օգնելու է հակակոռուպցիոն ծրագիրը դարձնել առավել էֆեկտիվ»:



Գիտության ֆինանսավորման քննադատությանը եւս վարչապետը համաձայն էր՝ պատրաստ քննարկելու այն հարցը, թե տրվող միջոցներն արդյո՞ք էֆեկտիվ են օգտագործվում, տալի՞ս են արդյունք՝ այդ դեպքում ավելացնելով ֆինանսավորումը:

«Մենք գիտակցում ենք, որ ընդդիմությունը պետք է սուր քննադատության ենթարկի կառավարությանը, եւ մենք պետք է զերծ մնանք այն գայթակղությունից, որ նույն եռանդով ու նույն սրությամբ արձագանքենք այդ քննադատությանը: Մեր առջեւ այլ խնդիր ենք տեսնում, որ այդ քննադատության մեջ բացահայտենք այն եզրերը, որոնք ստեղծելու են մեզ համար համերաշխության եւ համագործակցության մթնոլորտ, որովհետեւ մենք առաջին հերթին պատասխանելու ենք դրա համար, իսկ ընդդիմությունը՝ քննադատելու համար»: Եվ հավաստիացրեց, որ բոլոր դիտողություններն ու առաջարկություններն ուսումնասիրվելու են, որոնք կներկայացվեն բյուջեի քննարկումից հետո 24-ժամվա դադարի ընթացքում, եւ կընդունվեն նրանք, որոնք կառավարության գաղափարախոսության սկզբունքներին համահունչ են:

Հայտարարվեց բյուջեի քննարկմանը հաջորդող 24-ժամյա դադար, որը փաստորեն լրանում է ուրբաթ, ժամը 13:30-ին, մինչ այդ պատգամավորները պետք է հասցնեն ներկայացնել իրենց առաջարկները:

ՄԱՐԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Գնացքը գնացել է առաջ... նրանք պիտի վազեն, որ հասնեն գնացքին

*1-ին էջից*

Նալբանդյանը հիշեցրել է, որ Դովիլում հենց Կազանի գագաթաժողովից առաջ, Միացյալ Նահանգների, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի նախագահները կոչ էին արել կողմերին ընդունել այդ առաջարկները: «Չնայած գիտեք, որ Կազանում հնարավոր չեղավ հաջողություն արձանագրել, որովհետեւ Ադրբեջանը մերժեց այդ առաջարկները»:

Ադրբեջանի կողմից ինչ-որ նոր ճանապարհային քարտեզ առաջարկելու հարցը, ըստ Նալբանդյանի, լուրջ չէ, հատկապես եթե խոսքը 17 տարվա հնության առաջարկի մասին է: «Եթե 17 տարի առաջ այդ առաջարկված քարտեզը ինչ-որ իմաստ ունենար, ապա այն ժամանակ հնարավոր կլիներ առաջ շարժվել դրա հիման վրա: Պետք է ավելի իրատես լինել, լրջորեն մոտենալ միջազգային հանրության առաջարկներին, որոնք արտահայտվում են եռանախագահների միջոցով»:

Նոյեմբերի 14-16-ը Հայաստան պաշտոնական այցով ժամանած Լատվիայի նախարարն, իր հերթին, նշելով Նալբանդյանի հետ Իրանի եւ Սիրիայի շուրջն ընթացող զարգացումներին անդրադառնալու կարեւորությունն ու Հայաստանի փորձն այս երկրների հետ շփումներում, ասել է, որ համամիտ է հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելուն այլընտրանքի բացակայությանը՝ աջակցություն ցուցաբերելով միջազգային կառույցների՝ այդ հարցում ունեցած դիրքորոշմանը: Իսկ թե կարո՞ղ է Լատվիան ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախությունը, Էդգարս Ռինկեւիչսին նշել է, թե ինքն անկախության ճանաչումը չի դիտարկում որպես հակամարտության կարգավորմանը նպաստող երեւույթ, հատկապես մինչեւ բանակցությունների ավարտը:

Լատվիացի դիվանագետը հիշեցրել է նաեւ, որ պաշտոնական Ռիգան քննադատել է մարդասպան Սաֆարովին հերոսացնելու Ադրբեջանի մոտեցումը, շեշտելով, որ այդ հարցում բալթյան բոլոր երկրները միաձայն են խոսում:



# Պանիր արտադրող 18 ընկերություններից 17-ը վերսկսեցին աշխատել

**Կառավարության նիստի ավարտից հետո սննդամթերքի անվտանգության տեսչության պետի պաշտոնակատար Արման Արարատյանը երեկ հայտնեց, որ պանրի արտադրության հիգիենիկ կանոնների խախտում թույլ տված եւ գործունեությունը կասեցրած 18 ընկերություններից 17-ը միջոցառումներ են իրականացրել վիճակը կարգավորելու ուղղությամբ: Այդ ընկերությունները կշարունակեն իրենց գործունեությունը:**

**Զարգացման հայկական գործակալության տնօրեն Ռոբերտ Հարությունյանն էլ անդրադարձավ արտահանման նպատակ ունեցող «Հայկական պանիր» ծրագրին եւ ստեղծված համանուն ընկերության գործունեությանը: Նա նշեց, որ ընկերությունը 2009-ին հնարավորություն է ստացել Ռուսաստան հայկական պանիր արտահանելու: Այդ տարվա ընթացքում 2 անգամ՝ 5 տոննա եւ 20 տոննա քաշով պանիր է արտահանվել, բայց հետագայում դադարել է, չնայած պանիրը հաջողությամբ սպառվել է եւ բողոքներ չեն եղել: Ըստ Ռոբերտ Հարությունյանի՝ հետագայում արտահանում չի իրականացվել, քանի որ «Հայկական պանիր» ընկերությունը ստեղծվել է պանրի ավելցուկը արտահանելու համար, որպեսզի ներքին շուկայում դրա պատճառով լարվածություն չլինի, ապա, որովհետեւ պանրի գները արտաքին շուկայում իջել են:**

**Ա. Մ.**

# «Գիլոտինի» առաջին արդյունքները

**Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արմեն Եղիազարյանը երեկ կառավարության նիստի հասստամանը ներկայացրեց կենտրոնի գործունեության որոշ արդյունքներ, ապա դրանց մասին խոսեց մամուլի ասուլիսի ժամանակ:**

**Ըստ Արմեն Եղիազարյանի՝ կենտրոնի նպատակն է կարգավորել, հստակեցնել եւ կիսով չափ կրճատել օրենսդրությունը: Հանրային ծառայությունների ոլորտում կառավարությանն են ներկայացվել կոնկրետ փոփոխությունների առաջարկներ: Մասնավորապես, ձայնային եւ թվային ծառայություններ մատուցելու համար լիցենզավորումը վերացվել է, իսկ 2 տարի հետո կվերացվի ցանցերի կառուցման լիցենզավորումը: Պարզաբանելով այս որոշումը՝ Արմեն Եղիազարյանն ասաց, որ դա ենթադրում է, որ բջջային կապի ծառայություններ կարող են մատակարարել նաեւ այլ ընկերություններ, իսկ ինտերնետի զարգացման համար այս որոշումը ավելի մեծ հնարավորություններ է բացում:**

**Էներգետիկայի բնագավառում կկրճատվի ցանցին միանալու ժամկետը, իսկ եթե բնական մենաշնորհ ունեցող կազմակերպությունը այդ ժամկետում չհասցնի միացնել, ապա հնարավորություն է տրվում այլ ընկերություն վարձակալել, որը կիրականացնի դա: Փաստորեն, թե կապի, թե էներգետիկայի ոլորտներն ապամենաշնորհացվում են:**

**Բացի դրանից, ՀԷԿ-եր կառուցելու համար երկու լիցենզիայի փոխարեն մեկ լիցենզիա կպահանջվի: Ջրի մատակարարման ոլորտում եւս ցանցին միանալու ժամանակը կկրճատվի, ինչպես նաեւ հնարավորություն կտրվի էլեկտրոնային տարբերակով դա անել: Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը հայտնեց, որ քննարկվում են կրթության, գիտության ոլորտներում օրենսդրական կարգավորումները, սկսվել են հարկային եւ մաքսային ոլորտների, ձեռնարկատիրության եւ բյուջեի հետ կապված օրենքների քննարկումները:**

**Հարցին, թե ազգային կենտրոնի օրենսդրական կարգավորումները ինչ-որ շահերի չե՞ն բախվում, Արմեն Եղիազարյանը դրական պատասխանեց, օրինակ բերելով Երեւանի հասարակական տրանսպորտի առնչությամբ կենտրոնի առաջարկը: Մասնավորապես, առաջարկվում է միկրոավտոբուսային երթուղիների մրցույթներ այլեւս չանցկացնել եւ հասարակական տրանսպորտը վերապահել քաղաքային իշխանություններին:**

**Ա. Մ.**

# ՀԱԿ-ի ստորագրահավաքը

ՀԱԿ խմբակցությունը ստորագրահավաք է նախաձեռնել նոյեմբերի 21-ին ԱԺ արտահերթ նիստ հրավիրելու՝ մի շարք օրենքներում փոփոխություն կատարելու (Ընտրական օրենսգիրք, Քրեական օրենսգիրք, Պետռեգիստրի մասին օրենք), որանք պարտադիր համարելով անել մինչեւ նախագահական ընտրությունները: Անհրաժեշտ է 44 ստորագրություն, երեկ 35-ն արդեն հավաքվել էր:

## Հայտարարություն

2012թ. նոյեմբերի 22-ին՝ ժամը 14:15-ին, ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում (ք. Երեւան, Մելիք-Ադամյան 1) տեղի կունենա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պարզ ընթացակարգով տրված լիցենզիաների գործողության կասեցման եւ դադարեցման համար եզրակացություններ տվող հանձնաժողովի նիստը:

**Օրակարգում՝**

«ՕՐԴԻ» ՍՊԸ–ին ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության կողմից 10.07.2008թ. տրված «Հրագործական ապրանքների արտադրության, ներմուծման կամ առեւտրի» թիվ ՊԼ-5258 լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ 12.11.2012թ. դիմումի քննարկում:

***ՀՀ ֆինանսների նախարարություն***

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Անդրադարձ

Շուտով տարածաշրջան կայցելեն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներն ու ԼՂ հակամարտության կողմերի հետ կքննարկեն «նոր գաղափարներ»: Եթե հաշվի առնենք, որ այդ «նոր գաղափարները» հակամարտ կողմերին Մինսկի խմբի համանախագահությունը ներկայացրել է դեռեւս հոկտեմբերի 27-ին Փարիզում, ապա նոյեմբերին հակամարտ կողմերը պետք է իրենց պատասխանը տան այդ «նոր գաղափարներին» կամ անեն դրանց վերաբերյալ իրենց առաջարկությունները, եթե այդպիսիք լինեն: Դատելով հանգամանքից, որ Փարիզի հանդիպումից հետո Հայաստանի ԱԳ նախարարության պաշտոնական մերի ներկայացվածության մակարդակի կամ ձեւի փոփոխություն բանակցություններում:

Օրինակ՝ և՛ Հայաստանը, և՛ Ադրբեջանը բանակցություններին ներկայանում են ոչ թե նախագահների կամ ԱԳ նախարարների մակարդակով, այլ՝ հատուկ ներկայացուցիչների, որոնք կունենան դիվանագիտական աստիճան, եւ որոնք պաշտոնապես կներկայացնեն իրենց երկրների շահերն ու հետաքրքրությունները: Այս՝ միջազգային հակամարտությունների բանակցությունների պատմության մեջ բավականին ընդունված տարբերակը կազատի հակամարտ կողմերից Հայաստանի ու Ադրբեջանի բարձրագույն նելով ինչպես Երեւանի, այնպես էլ Ստեփանակերտի ներկայացուցչի պաշտոնը, այդպիսով ԼՂՀ-ին վերադարձնելով բանակցությունների սեղանի շուրջը: Իսկ հայկական զույգ պետությունները բանակցություններում ներկայացվում են միեւնույն անձով, քանի որ Ստեփանակերտի առանձին ներկայացուցչի հետ Բաքուն այսօր գոնե բանակցությունների չի նստի, ուրիշ հարց, եթե այդ անձը ներկայացնի նաեւ Երեւանին:

Ո՞վ կարող է նա լինել: Բնականաբար այնպիսի մարդ, որը տեղյակ է ղարաբաղյան հակամարտության ու բանակցությունների պատմությանը, որն ինքն անձամբ

ՏԵՍԱԿԵՏ

## Ինչպե՞ս Ստեփանակերտին վերադարձնել բանակցության սեղանին եւ ինչպե՞ս զուգահեռաբար պարզեցնել ներքաղաքական դաշտը Հայաստանում

հաղորդագրության մեջ ընդգծվեց այդ «նոր գաղափարների» առկայությունը, երբ Բաքվում դրանց մասին լռեցին, ավելին՝ մի քանի տեղերից վերստին հնչեցին Մինսկի խմբի աշխատանքի անարդյունավետության եւ դրա ֆորմատի փոփոխության անհրաժեշտության մասին տեսակետներ, ապա կարելի է եզրակացնել, որ համանախագահության առաջարկած «նոր գաղափարները», ինչպես ցույց է տալիս հակամարտության բանակցությունների պատմությունը, հօգուտ Ադրբեջանի չէ, մանավանդ՝ հայտնի սաֆարովյան իրադարձությունից հետո:

Թվում է, որ պահը «հայանպաստ է», ինչից կարելի է եւ օգտվել, օրինակ, բանակցությունների սեղանի շուրջը Ստեփանակերտին վերադարձնելով: Անշուշտ, ինչպես առաջին նախագահ Տեր-Պետրոսյանն իր նախորդ տարվա հանրահավաքներից մեկում ասաց. «Ղարաբաղին բանակցությունների սեղան վերադարձնելը բավականին դժվարին է», բայց դա դեռ չի նշանակում, թե անհնարին է: Պարզապես անհրաժեշտ է ընդունել, գործածել այնպիսի մեխանիզմ, որի շահագործումից «միջազգային դժգոհություններ» չեն լինի, իսկ որպեսզի այդպես չլինի, անհրաժեշտ է միջազգային պրակտիկայում ընդունված մեխանիզմի կիրառումը ԼՂ հակամարտության մեջ:

Եթե Բաքուն շարունակ հայտարարում է Մինսկի խմբի ֆորմատի փոփոխության մասին՝ միջնորդական առկա առաքելությանը մեղադրելով անգործության մեջ ու դրանով իսկ հերթական անգամ ցուցաբերելով սեփական «անգրագիտությունը», որի, ինչպես նաեւ Մինսկի խմբի մանդատի հնարավորությունների մասին մեկ անգամ չէ, որ խոսել ենք, ապա Երեւանը կարող է առաջարկել հակամարտության կողղեկավարությանը երբեմն անհարկի ու «իրենց չպատշաճող» հանդիպումներից՝ այդ պարտականությունը կցելով ներկայացուցիչներին, որոնք, Մինսկի խմբի համանախագահող երկրների ներկայացուցիչների (ի դեպ) մասնակցությամբ կհանդիպեն այնքան ժամանակ, քանի դեռ պատրաստ չի լինի այսպես կոչված «խաղաղության մեծ պայմանագիրը», ինչը ստորագրելու կամ վերջնական համաձայնեցնելու համար էլ կհանդիպեն արդեն նախագահները: ԼՂ հակամարտության կողմերի՝ ավելի նվազեցված մակարդակի հանդիպումներին անցնելը կնպաստի կողմերի միջեւ լարվածության որոշակի թոթափմանը, ինչը դրան կոչ անող միջազգային հանրությունը չի կարող չողջունել: Դրանով իսկ նախագահները կամ ԱԳ նախարարները ստիպված չեն լինի պարբերաբար պատասխանել միմյանց հասցեին փոխադարձաբար հնչող մեղադրանքներին, քանի որ իրենք անձամբ բանակցություններում ներառված չեն լինի:

Այժմ՝ ԼՂՀ-ի «վերադարձի» մասին: Հայտարարելով բանակցություններում հակամարտ կողմերի ներկայացվածության մակարդակի վերանայման մասին սեփական նախաձեռնությունը՝ Երեւանը տալիս է նաեւ բանակցություններում իր ներկայացուցչի անունը: Նույն օրը ԼՂՀ-ն, անձամբ նախագահ Բակո Սահակյանը հայտարարում է, որ Ստեփանակերտը եւս, հանդիսանալով հակամարտության հիմնական կողմ, ինչը ոչ ոք, այդ թվում՝ միջազգային հանրությունը, չի հերքում, հայտարարում է բանակցություններում սեփական ներկայացուցչին առաջադրելու մասին, որը, սակայն, նույն անձն է, ով կներկայացնի Երեւանի շահերը:

Այսինքն՝ Ստեփանակերտը եւ Երեւանը բանակցություններում ներկայացնում է միեւնույն անձը, սակայն պաշտոնապես ստանձմասնակից է եղել այդ բանակցություններին, տիրապետում է դրա բոլոր մանրամասնություններին եւ ունի վստահության մեծ պաշար ինչպես Ղարաբաղի, այնպես էլ Հայաստանի բարձրագույն իշխանությունների կողմից:

Թվում է, թե թեկնածուն միակն է՝ Ռոբերտ Քոչարյանը: Ընդ որում՝ նշանակելով Քոչարյանին ԼՂ հարցով Երեւանի պաշտոնական ներկայացուցիչ, հետեւաբար ԼՂ հակամարտության մեջ հայկական շահի կրող ու պաշտպան, նախագահ Սերժ Սարգսյանը կարող է լուծել մի շարք ներքաղաքական հարցեր եւս, օրինակ ցույց տալով, որ երկրորդ նախագահի հետ իրենց հարաբերությունները շարունակում են մնալ լիակատար փոխվստահության պայմաններում, որի առկայությունը ցույց տալու անհրաժեշտություն գործող նախագահը նախընտրական այս փուլում հատկապես ունի: Եվ կամ, եթե երկրորդ ու գործող նախագահների միջեւ իրոք լարվածություն կա, ապա սա թերեւս դրա հաղթահարման ուղիներից մեկը կարող է լինել:

Չմոռանանք նաեւ, որ ի տարբերություն գործող նախագահի, Քոչարյանն ավելի կոշտ քաղաքական գործչի համարում ունի, ինչը, թվում է, ներկա իրավիճակում հենց անհրաժեշտ է ԼՂ հակամարտության բանակցություններում հայկական զույգ կողմերին:

Անշուշտ, այս ամենը դեռ քննարկելիք է, ընդ որում՝ փորձագիտական վերլուծության արժանի, սակայն կարող ենք պնդել, որ սա Ստեփանակերտին բանակցությունների սեղանի շուրջը վերադարձնելու, ինչպես նաեւ Հայաստանի ներքաղաքական դաշտում բազմաթիվ ու կարեւոր հարցերին պատասխանելու, որոշները գրելու համար առկա ճանապարհներից մեկն է:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

## Նորի՞ց ծածկադմփոց

Երեկ լրագրողների հետ էր հանդիպել բնապահպան, «Էկոլոգիական հասարակական դաշինքի» ղեկավար **Սիլվա Ադամյանը**, որը եւս մեկ անգամ բարձրաձայնեց «Խոսրովի անտառ» պետական արգելոցում կատարված ապօրինի շինարարության հետ կապված խնդիրները, որոնց «**Ազգը**» բազմիցս անդրադարձել է:

Արգելոցում տեղի ունեցած որսագողության վերաբերյալ բանախոսն ասաց, որ լինելով կենդանաբան՝ իր համար շատ զարմանալի էր, երբ հեռուստատեսությամբ ցույց տվեցին հավանաբար 45 կիլոգրամ կշռող մի մարդու, եւ ինչպե՞ս կարող էր այդ տղամարդը զինամթերքով հարձակում գործել ու ստանալ բեզոարյան այծ եւ արջ. «Որսագողության հարցը ինչպե՞ս են փորձում մեր իրավապահպան մարմինները լուծել՝ մեզ համար անհայտ է մնում: Նորի՞ց ծածկադմփոց է տեղի ունենալու, եւ չենք իմանալու, թե ովքեր են եղել իրական որսագողերը»:

Ընդհանրապես ծածկադմփոցը նորությո՞ւն է հանրության համար, դժվար է ասել, սակայն մի բան պարզ է, որ այժմ հանրությունը էլ ոչնչից չի զարմանում:

Մ. Հ.

ՀՊՄՀ 90-ԱՄՅԱԿ

## «Չկա մի ոլորտ, որտեղ մանկավարժի դերակատարությունը ընդգծված չլինի»

**Երեկ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյան այցելեց Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան՝ մասնակցելու գիտական խորհրդի նիստին եւ շնորհավորելու համալսարանի հիմնադրման 90-ամյակի առթիվ պրոֆեսորադասախոսական կազմին: Համալսարանի ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը ողջունեց նախարարի մուտքը Մանկավարժական համալսարան:**



**Խոսելով տարիների ընթացքում մանկավարժական համալսարանի եւ պաշտպանության նախարարության համագործակցության, վերջին շրջանում Մանկավարժական համալսարանի դասախոսների եւ մագիստրոսների կողմից զորամասերում իրականացվող կրթական ծրագրերի մասին՝ ռեկտորն ասաց. «Երկար տարիներ է, որ հայոց բանակի եւ մանկավարժական համալսարանի միջեւ կան որոշակի գործնական հարաբերություններ: Վստահ եմ, որ պաշտպանության նախարարությունը եւ Մանկավարժական համալսարանն այն կարեւորագույն ազգային ինստիտուտներ են, որոնք, ազգային շահերից ելնելով, պարտադրված են համագործակցել եւ աշխատել միմյանց հետ»:**

**Նախարար Սեյրան Օհանյանը շնորհավորեց բոլորին համալսարանի հիմնադրման 90-ամյակի առթիվ եւ մանկավարժի մասնագիտությունն ամենապատվավորը համարեց: «Չկա մի ոլորտ, որտեղ մանկավարժի դերակատարությունը բարձր կերպով ընդգծված չլինի, դուք եք դաստիարակում մեր ազգը: Մանկավարժները կանգնած են եղել հայկական բանակի կազմավորման ակունքներում եւ ունեցել են իրենց մեծ ներդրումը՝ կամավորական ջոկատներից սկսած: Այսօր ՊՆ-ի եւ Մանկավարժական համալսարանի համագործակցությունը շատ բարձր մակարդակի վրա է», ընդգծեց նախարարը: Սեյրան Օհանյանը մանկավարժի դերն այսօր էլ կարեւորեց հայոց բանակում՝ նշելով, որ Մանկավարժական համալսարանը աչքի է ընկնում իր ռազմահայրենասիրական, դաստիարակչական միջոցառումների կազմակերպմամբ:**

**Ռազմակրթական խնդիրներին անդրադառնալով՝ նախարարը նկատեց. «Մենք ունենալու ենք մեր սեփական ռազմական հրամանատարաշտաբային օղակի պատրաստման ակադեմիան, ինչպես նաեւ նախատեսվում է հիմնել ռազմավարական ուսումնական կենտրոն»:**

**Անդրադառնալով սահմանների պաշտպանությանը՝ նախարարը նշեց, որ 1994 թվականից շփման գծում մենք պարտադրողի դերում ենք: «Դիվերսիոն հարձակումների եւ դիպուկահարների գործողություններից կորուստներ ունենում ենք, բայց այդ գործողությունները կանխվում են կամ քառակի նրանք իրենց պատիժը ստանում են»:**

**Ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը Սեյրան Օհանյանին հանձնեց Մանկավարժական համալսարանի 90-ամյակը խորհրդանշող մեդալը եւ հուշանվեր: Իսկ նախարարը երիտասարդությանը ռազմահայրենասիրական ոգով դաստիարակելու համար ռեկտորին պարգեւատրեց «Անդրանիկ Օզանյան» եւ Հայոց բանակի կազմավորման 20-ամյակին նվիրված մեդալներով: ՀՀ ՊՆ-ի հետ արդյունավետ համագործակցության համար նախարարը «Դրաստամատ Կանայան» եւ «Վազգեն Սարգսյան» մեդալներով պարգեւատրեց համալսարանի մի շարք դասախոսների:**

## Կառուցվել է 12 դաշտ մինի ֆուտբոլի համար, հիմնանորոգվել է 40 փողոց

**Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության եւ բարեկարգման վարչության պետի տեղակալ Ֆելիքս Յայլոյանի ներկայացմամբ՝ մայրաքաղաքում կատարվել է 2 մլն քմ ընդհանուր ծավալով ասֆալտապատում: Հիմնանորոգվել է 40 փողոց, կատարվել են դիտահորերի, մայթերի նորոգում եւ եզրաքարերի ամրացում: Քաղաքապետարանի բյուջեով շինարարության եւ բարեկարգման վարչությունն իրականացրել է 18,8 մլրդ դրամի շինբարեկարգման աշխատանքներ, 8,8 մլրդ դրամի սահմաններում կատարվել են շինարարության բարեկարգման այլ տեսակի աշխատանքներ:**

**Ճանապարհաշինական ծրագրերի շրջանակում շարունակվում են Ուլնեցու փողոցից Ռուբինյանց փողոց տանող 2.5 կմ երկարությամբ շրջանցիկ նոր ավտոճանապարհի, ինչպես նաեւ Լենինգրադյան փողոցն Իսակովի պողոտային կապող ավտոմայրուղու կառուցման աշխատանքները:**

**Ձեռուցման համակարգերով են ապահովվել մայրաքաղաքի բազմաթիվ դպրոցներ, 26 մանկապարտեզ հիմնանորոգվել է: Բարեկարգման ծրագրերով մաքրվել եւ վերանորոգվել են 137 շենքերի ճակատային հատվածներ: Կառուցվել է 12 դաշտ մինի ֆուտբոլի համար:**

Հ. Հ.

# Եվրասիական քաղաքական խորհրդատվություններ Երեւանում եւ եվրասիական ինտեգրման հեռանկարը

Նոյեմբերի 12-ին եւ 13-ին Երեւանում անցան Եվրասիական քաղաքական խորհրդատվություններ, որոնց մասնակցում էին Հայաստանի Հանրապետական կուսակցության, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության, «Եդինայա Ռոսիա» համառուսաստանյան կուսակցության, Ուկրաինայի Տարածաշրջանների կուսակցության եւ Ղազախստանի «Նուռ Օթան» կուսակցության պատվիրակությունները: Առաջին անգամը լինելով, այս խորհրդատվություններին դիտորդի կարգավիճակով մասնակցում էին նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Ազատ Արցախ» կուսակցության եւ Ժողովրդավարական կուսակցության պատվիրակությունները: Երեւանյան խորհրդատվությունների անցկացման մասին քաղաքական պայմանավորվածությունը ձեռք էր բերվել «Եդինայա Ռոսիա» կուսակցության նախաձեռնությամբ ամռանը Կազանում անցած միջկուսակցական Եվրասիական համաժողովի արդյունքում, եւ նրա նպատակն էր համաձայնեցնել եվրասիական տարածքի միմյանց հետ համագործակցող առաջատար քաղաքական ուժերի դիրքորոշումները դեկտեմբերի 3-ին Սանկտ Պետերբուրգում մեկնարկող Եվրասիական համաժողովի կուսակցական ձեւաչափի օրակարգի եւ ընդունվելիք հուշագրի հարցերում: Ողջունելով այս խորհրդատվությունների մասնակիցներին՝ Հայաստանի Հանրապետության նախագահ **Սերժ Սարգսյանը** շեշտել է, որ. «Հանդիսանալով ԱՊՀ տարածքում ինտեգրացիոն գործընթացների խորացման անհրաժեշտության համոզված կողմնակից, համոզված եմ, որ դրանցում կուսակցական կառույցներն ընդգրկելը, որոնց ուսերին է ընկած հետագա բարեփոխումների, տնտեսական զարգացման եւ մեր պետություններում ժամանակակից հասարակության կառուցման պատասխանատվությունը, նոր ազդակ կհաղորդի մեր գործողություններին եւ նախանշված ծրագրերի իրականացմանը»: Հայաստանի նախագահը համոզմունք է հայտնել, որ ԱՊՀ երկրների կուսակցությունների փոխգործակցության նման ձեւաչափը ներկուսակցական մշակույթի զարգացման լավ հիմք կդնի եւ կստեղծի ամուր հենք տվյալ գործընթացի մասնակիցների միջեւ համագործակցության մեխանիզմների ձեւավորման համար: Եվ այսպես. ինչի՞ համար էին Երեւանում հավաքվել համագործակցող քաղաքական կուսակցությունների պատվիրակությունները եւ որքանո՞վ են երեւանյան խորհրդատվությունները հստակեցնում եվրասիական ինտեգրման գործընթացի գծագրվող ուրվագիծը:

## Քայլ եվրասիական տարածքում միջկուսակցական երկխոսության ճանապարհին

Երեւանյան խորհրդատվությունների բացման ժամանակ Հայաստանի Հանրապետական կուսակցության փոխնախագահ կրթության եւ գիտության նախարար **Արմեն Աշոտյանը** հայտարարեց. «Նման միջոցառումները մեզ, նախ եւ առաջ, թույլ են տալիս միավորել քաղաքական վերնախավերը եւ քաղաքական կուսակցությունների օրակարգում ընդգրկել միջազգային համագործակցության ծրագրեր»: Նրա գնահատմամբ՝ ԱՊՀ տարածքում վերկուսակցական համակարգող մարմնի ստեղծման առաջարկությունը կընդունվի եւ հաջորդ քայլերը ուղղված կլինեն կամավոր հիմունքներով վերազգային, վերկուսակցական, քաղաքական ձեւաչափի ձեւավորմանը: Նշանակո՞ւմ է սա արդյոք, որ եվրասիական տարածքի քաղաքական վերնախավերում արդեն քննարկվում է վերազգային խորհրդարանի եւ վերազգային կառավարության հարցը: Խորհրդատվությունների մասնակիցների հետ զրույցների ընթացքում առանց բացառության բոլոր քաղաքական գործիչները վստահեցրին, որ նման հարցադրումներ Երեւանում չեն եղել, եւ այդ հարցերը չեն քննարկվել: Այդ դեպքում ի՞նչ է նշանակում «վերազգային քաղաքական մարմին» եզրը: Զրուցակիցներս բացատրել են, որ խոսքը մշտապես գործող բազմակուսակցական խորհրդատվական եւ երկխոսության ձեւաչափի մասին է, որտեղ համագործակցության ձգտող քաղաքական կուսակցությունները կկարողանան վստահելի եւ բարյացակամ մթնոլորտում քննարկել եվրասիական ինտեգրման գործընթացի ծավալման ճանապարհին առաջացող հիմնախնդիրներն ու հարցերը: Օրինակ՝ երեւանյան խորհրդատվությունների «աղը» դրանցում Ուկրաինայի Գերագույն ռադայի ընտրություններում վերջերս հաղթանակ տարած Տարածաշրջանների կուսակցության պատվիրակության ակտիվ մասնակցությունն էր ուկրաինական խորհրդարանի հանձնաժողովի նախագահ, կուսակցության քաղխորհրդի նախագահության անդամ, կուսակցության կենտրոնական աշխատակազմի ղեկավար Ալեքսանդր Կուշնիրի գլխավորությամբ: Բոլորն են հասկանում, թե ինչ կարեւորություն ունի Ուկրաինայի ավելի սերտ մասնակցությունը եվրասիական ինտեգրմանը: Հայտնի է, որ Ուկրաինան, ինչպես եւ Հայաստանը, ԵվրԱզԷՍ-ում դիտորդի կարգավիճակ ունի, եւ ապագա Եվրասիական միության անդամները շատ կցանկանային, որ մեծ շուկա եւ քաղաքական կշիռ ունեցող այդ կարեւոր երկիրն ավելի վճռական քայլեր կատարեր եվրասիական ինտեգրման ուղղությամբ: Սա նուրբ եւ զգայուն խնդիր է, որովհետեւ Ուկրաինայում ձգտում են շարունակել եվրոպական ինտեգրման ուղղությամբ ավելի վաղ հռչակված քաղաքական քայլերը, բայց եւ միաժամանակ հասկանում են, որ ինտեգրումը դեպի Արեւելք հսկայական գայթակղիչ տնտեսական ներուժ է պարունակում: Պարոն Կուշնիրն, օրինակ, ասում էր, որ Խորհրդային Միության ժամանակ Ուկրաինան ծայրամասային տարածք էր, իսկ անկախության տարիներին դարձավ մեծ պետություն Եվրոպայի կենտրոնում: Բացելով իր շուկաները աշխարհի, եւ մասնավորապես Եվրոպայի արտադրողների համար, ուկրաինացիները կարծում էին, որ իրենց ապրանքների արտահանման համար նույնպես կանաչ լույս կվառվի: Սակայն այդ հույսերը չարդարացան, եւ բոլորը տեսնում են, որ այսօր Արեւելքի, մասնավորապես ասիական-խաղաղօվկիանոսյան տարածքի տնտեսությունները շատ ավելի արագ եւ դինամիկ են զարգանում: Հենց դրանով էլ բացատրվում է Ուկրաինայի եւ նրա իշխող քաղաքական ուժի մեծացող հետաքրքրությունը եվրասիական ձեւաչափերում համագործակցելու հարցերում:

Պատասխանելով մեր հարցին, թե ի՞նչ տվեցին երեւանյան խորհրդատվությունները մասնակիցներին եւ որքանո՞վ նպաստեցին հռչակված նպատակների իրականացմանը, «Եդինայա Ռոսիա» կուսակցության գլխավոր խորհրդի նախագահության անդամ, Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի անդամ **Անդրեյ Կլիմովը** հավաստիացրեց, որ երկուշաբթի օրը եւ ամբողջ գիշեր անընդհատ քննարկումներ անցկացնելով, նրանք սկզբունքորեն համաձայնեցրել են դեկտեմբերի 3-ին կայանալիք պետերբուրգյան վեհաժողովի օրակարգը եւ նախապատրաստել են ընդունվելիք հուշագրի նախագիծը: Նրա խոսքերով՝ երեւանյան խորհրդատվությունը կարեւոր էր այնքանով, որ պարզություն եւ հստակություն մտցրեց հետագա քայլերում:

Այս խորհրդատվությունները, կարեւոր քայլ լինելով տարվա կարեւորագույն միջոցառման՝ պետերբուրգյան համաժողովի նախապատրաստման ճանապարհին, միաժամանակ առաջին քաղաքական միջոցառումն էին Հայաստանում, որով ազդարարվեց եվրասիական ինտեգրման թեմայով քննարկումների եւ բանավեճերի սկիզբը ոչ միայն հասարակական կազմակերպությունների, գիտության եւ մշակույթի մարդկանց, այլ նաեւ քաղաքական վերնախավերի մասնակցությամբ:

## Նոր հարթակ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման փնտրտուքի համար

Առանձնահատուկ հիշատակության է արժանի Լեռնային Ղարաբաղի ամենաազդեցիկ երկու քաղաքական կուսակցությունների մասնակցությունը՝ առայժմ դիտորդի կարգավիճակով: Հենց խորհրդատվությունների սկզբում ողջունելով համագործակցող կուսակցությունների պատվիրակություններին եւ հաջողություն մաղթելով քաղաքական խորհրդատվություններին՝ Արցախի պատգամավորները հույս հայտնեցին, որ հաջորդ բոլոր միջոցառումներում իրենց պատվիրակությունները կմասնակցեն լիարժեք մասնակցի կարգավիճակով: ԼՂՀ Ազգային ժողովի փոխնախագահ **Արթուր Թովմասյանը** անխտիր բոլոր զրուցակիցների հետ խոսակցությունների ժամանակ անում էր նույն պարզ եւ անխոցելի հարցադրումը. «Ինչո՞ւ Ուկրաինայի, Բելառուսի կամ Ղազախստանի կուսակցությունները կարող են եվրասիական քաղաքակրթության մաս լինելով միջկուսակցական համագործակցության մեջ ներգրավվել, իսկ Արցախն այդ քաղաքակրթության մաս չհամարվել եւ նրա կուսակցությունները միջկուսակցական նման ձեւաչափում լիարժեք ձայնի իրավունք չունենալ: Այդ ո՞ր տրամաբանությունն է հնարավոր դարձնում նման վիճակը»: Այս հարցադրումն իսկապես շատ բանական եւ արդարացի է: «Բարգավաճ Հայաստան» կուսակցության պատվիրակության ղեկավար, ԱԺ պատգամավոր եւ կուսակցության մամուլի խոսնակ **Տիգրան Ուրիխանյանն** իր եւ գործընկերների անունից հավաստիացրեց, որ այդ հարցադրումով ինքը ոչ միայն նամակով դիմելու է պետերբուրգյան համաժողովի կազմակերպիչներին, այլեւ բոլոր ջանքերը գործադրելու է, որ արցախյան կուսակցությունները վերոհիշյալ համաժողովում լիարժեք մասնակցության հնարավորություն ստանան: Արդեն տեղեկություններ կան, որ Պետերբուրգում հավաքվելու են հիշյալ ձեւաչափում համագործակցելու ցանկություն հայտնած մոտ 60 կուսակցությունների պատվիրակություններ: Շատ հնարավոր է, որ մասնակցեն նաեւ Աբխազիայի, Հարավային Օսիայի, Մերձդնեստրյան ինքնահռչակ հանրապետության առաջատար քաղաքական ուժերը: Այդ դեպքում հեշտ չի լինի մերժել արցախցիներին մասնակցության հարցում: Կազմակերպիչների մեջ որոշ անհանգստություն կարող է առաջանալ, եթե Ադրբեջանի «Ենի Ազերբայջան» կուսակցությունը վճռականորեն դրա դեմ բողոքի: Հետո ի՞նչ: Չէ՞ որ չլուծված հակամարտությունների կարգավորման հարցը եվրասիական ինտեգրման ճանապարհին մի օր իր ողջ սրությամբ հառնելու է: Առնվազն այնպես, ինչպես մինչ այժմ հառնել է եվրոպական ինտեգրման գործընթացի ճանապարհին: Չէ՞ որ հայտնի են Եվրոպական խորհրդարանի բանաձեւերը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վերաբերյալ, ինչպես նաեւ եվրոպական պաշտոնյաների եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների դիրքորոշումներն այս հարցում: Արդեն պարզից էլ պարզ է, որ եթե միջկուսակցական համագործակցության ձեւաչափում կամ միջխորհրդարանական երկխոսության, գուցե եւ այլ ձեւաչափերում եվրասիական համագործակցության ձեւավորման գործընթացում այս հարցերի պատասխանի փնտրտուքը անհարկի ձգձգվի, ապա դա միայն կբարդացնի Հարավային Կովկասի ընդգրկման հարցը այդ գործընթացում: Այնպես որ եվրասիական միջկուսակցական ձեւաչափը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համար մի նոր քաղաքական հարթակ դառնալու հարցն օրինաչափորեն ուրվագծված է:

## Թարմ գաղափարներ եվրասիական ինտեգրման առաջընթացի համար

Երեւանյան խորհրդատվությունների ռուսաստանցի մասնակիցները հատուկ ընդգծեցին, որ դեկտեմբերի 3-ին կլինի նաեւ հոդվածների մի ժողովածուի շնորհանդես, որի նյութերը հեղինակել են Վլադիմիր Պուտինը, Սերգեյ Նարիշկինը, Վալենտինա Մատվիենկոն: Անցյալ տարվա հոկտեմբերին «Իզվեստիա» թերթում լույս տեսած նախագահ Վլադիմիր Պուտինի հայտնի հոդվածով փաստորեն հիմք դրվեց Եվրասիական միության ձեւավորմանն ու զարգացմանն առնչվող քաղաքական ու հասարակական քննարկումներին: Սա նշանակում է, որ մեկ տարի անց գաղափարական մակարդակում Ռուսաստանի առաջատար քաղաքական գործիչները փորձելու են գնահատել մեկ տարվա աշխատանքի արդյունքը եւ նախանշել 2013 թ. թեմատիկան: Հայտնի է, որ 2014 թ. հունվարի 1-ին, ըստ ամենայնի, կհռչակվի Եվրասիական միության ստեղծումը Ռուսաստանի, Բելառուսի եւ Ղազախստանի մասնակցությամբ: Թե ի՞նչ տեսք կստանա այդ միությունը եւ որքանո՞վ գրավիչ կլինի հետխորհրդային տարածքի մյուս պետությունների համար՝ պարզ կդառնա արդեն մոտակա մեկ-երկու տարիների ընթացքում, եթե անառարկելի լինեն միության ընձեռած տնտեսական օգուտները, եւ եթե կարողանա իրեն պատշաճող տեղը զբաղեցնել ժամանակակից աշխարհի բարդ իրողություններում: Հասկանալի է, որ այդ գրքի հրատարակությունը մի գաղափարախոսական հիմնավորում է: Գաղափարախոսություն, որից քսան տարի առաջ հետխորհրդային երկրներում փորձեցին հրաժարվել եւ որի պակասն այժմ զգացվում է: Բայց ոչ թե ամբողջատիրական կամ ավտորիտար գաղափարախոսություն, այլ ժամանակակից ժողովրդավարական արժեքների վրա հիմնված եւ հասարակ մարդկանց կենսական սպասելիքներն ու իրավունքները բանաձեւող գաղափարախոսություն: Երեւանում հավաքված կուսակցությունների ներկայացուցիչները միաձայն հայտարարում էին, որ որեւէ հակադրություն կամ առճակատում չեն տեսնում ծավալվող եվրասիական ինտեգրման եւ եվրոպական ինտեգրման միջեւ: Ավելին, բարձր նպատակը Եվրասիական միության եւ Եվրոպական միության միջեւ համագործակցության եւ նույնիսկ փոխգործակցության նոր մակարդակի հաստատումն է: Ինչպես ընդունված է հիմա ասել՝ հանուն Լիսաբոնից մինչեւ Վլադիվոստոկ ձգվող նոր մեծ Եվրոպայի: Սա մի գաղափար է, որի համար 20-30 տարի առաջ պայքարում էին, օրինակ, Արեւմտյան Եվրոպայի աջերը, եւ որն այն ժամանակ անընդունելի էին համարում ամերիկացի քաղաքագետները: Նոր իրողությունների պայմաններում այս գաղափարը նոր հնչողություն է ստանում: Պետք է ակնկալել, որ այս մասին մոտ ապագայում իրենց տեսակետները կհայտնեն ոչ միայն եվրասիական տարածքի, այլեւ Եվրոպայի քաղաքական առաջնորդները:

**ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ**
**Քաղաքական վերլուծաբան, բանասիրական գիտությունների թեկնածու**

# Իրաքի նախագահի Թալաբանին լքել է Բաղդադը

## Պատճառը վարչապետ Մալիքիի հետ լուրջ տարաձայնություններն են

Այդ մասին երեկ նշել էր «Դունյա Բուլթենին»: Թուրքական գործակալության տվյալներով, Իրաքի նախագահ Ջալալ Թալաբանին Բաղդադը լքել է արտահայտելու համար իր դժգոհությունը վարչապետ Նուրիա ալ Մալիքիից: Քուրդիստանի հայրենասերների միության անունից մի պատասխանատու ասել է, որ Թալաբանին խիստ զայրացած է Մալիքիի գործողություններից: Նրան լրացրել է միության խոսնակ Ազադ Ջունդիանին, թե վերջին շրջանում Մալիքին լուրջ սխալներ է թույլ տալիս, եթե դրանք չուղղի, իրենք կդիմեն այլ միջոցների:

Որո՞նք են այդ սխալները: Իրաքյան զինված ուժերի կազմում «Տիգրիսյան օպերատիվ ուժեր» կոչվող հատուկ նշանակության գունդ կազմավորելու, այդ գունդը Հյուսիսային Իրաքի «Քուրդիստան» շրջանում տեղաբաշխելու, ինչպես նաեւ փեշմերգեներին Իրաքի բանակին ենթարկելու, այսպիսով քրդական շրջանները լիարժեք վերահսկելու Մալիքիի մտադրություններն են:

«Քուրդիստանի» հայրենասերների միության պատասխանատուները, ի դեպ, Իրաքի նախագահ Թալաբանին ղեկավարն է այս միության, հայտնել են, որ վերջինը պահանջել է հետաձգել «Տիգրիսյան օպերատիվ ուժերի» կազմավորումը, չնայած պահանջն ընդառաջելու խոստմանը, վարչապետ Մալիքին, այնուամենայնիվ, կազմավորել է այդ գունդը, ընդ որում՝ շրջանցելով Իրաքի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Բաբեքիր Զեբարիին:

Հարկ է նշել, որ բացի Իրաքի նախագահ Թալաբանիից եւ արտգործնախարար Խոշյար Զեբարիից ազգությամբ քուրդ է նաեւ զինված ուժերի գլխավոր շտաբի պետը: Համենայն դեպս, լքելով Բաղդադը, Թալաբանին հաստատվել է Հյուսիսային Իրաքի Սուլեյմանիե քաղաքում, որտեղ էլ երեկ ճեպազրույց է ունեցել լրագրողների հետ:

Նա ասել է, որ ինքը վարչապետ Մալիքիից պահանջել է հրաժարվել հատուկ նշանակության գնդի կազմավորումից, մինչդեռ նա ոչ միայն կազմավորել, այլեւ այդ գնդի գործունեության տարածքի մեջ է ընդգրկել նաեւ Սելահադդին նահանգը, որտեղ տեղակայված է Հյուսիսային Իրաքի «Քուրդիստան» շրջանի նախագահ Մասուդ Բարզանիի շտաբկայանը:

Իրաքի բնակչությունը շուրջ 26 մլն է, որի 65 տոկոսը շիաներ են, ընդ որում՝ ոչ միայն արաբ: Շիաների մեջ կան նաեւ քրդեր ու ավելի քան 1 մլն բնակչություն ունեցող թուրքմենների մի մասը: Ինչ վերաբերում է քրդերին, ապա նրանց թիվը Իրաքում մոտ 3,5 մլն է, որը կազմում է ընդհանուր բնակչության 15 տոկոսը: Ակամա հարց է ծագում՝ ինչո՞վ բացատրել մեծապես արաբներով բնակեցված եւ բնակչության 65 տոկոսը շիաներից բաղկացած Իրաքում ինչպես նախագահի ու արտգործնախարարի, այնպես էլ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի պաշտոնի հանձնումը սուննի քրդերին: Հարցի պատասխանը միանշանակ է՝ Իրաքում մասնատման նախադրյալներ ստեղծելու ԱՄՆ-ի միտումներով:

Ինչպես երեւում է, իրանական ազդեցության տարածումը Իրաքի գոնե շիա հատվածում ի չիք է դարձրել այդ միտումները, իսկ ամերիկյան զորքերի դուրսբերումից հետո վարչապետ Նուրի ալ Մալիքին հեզիետե դրության տերն է դարձել երկրում, ձեռնամուխ լինելով Իրաքի միասնականության վերականգնմանը:

Ակնհայտ է, որ ոչ թե Իրաքի ժողովրդի, այլ Վաշինգտոնի աջակցությունը վայելող քուրդ գործիչները ամերիկյան զորքերի դուրսբերումից հետո զրկված գլխավոր հենարանից, պետք է տեղի տային վարչապետ Նուրի ալ Մալիքիին: Հետեւաբար բացառված չէ Թալաբանիի օրինակին Իրաքի արտգործնախարարի ու զինված ուժերի գլխավոր շտաբի պետի հետեւումը:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# Գողացել են NASA-ի նոութբուքը՝ աշխատակիցների տվյալներով

NASA-ի ղեկավարությունը աշխատակիցներին ծանուցել է, որ երկու շաբաթ առաջ նրանց մի գործընկերոջից գողացել են նոութբուք՝ տիեզերական գերատեսչության մի քանի հազար աշխատակիցների անձնական տվյալներով: Այդ մասին հաղորդում է «Ռոյթեր» գործակալությունը:



Գործակալության կենտրոնակայանում աշխատակցին տրված նոութբուքը հափշտակվել է նրա դռնփակ ավտոմեքենայից: Համակարգիչը պաշտպանված էր ծածկագրով, բայց դրա կոշտ սկավառակի վրա տեղեկությունները ծածկագրված չէին: Ուստի աշխատակիցների անձնական տվյալները հայտնվել են օտարների ձեռքին:

Մոտ երկու ամիս կպահանջվի, որպեսզի ղեկավարությունը պարզի, թե կոնկրետ որ աշխատակիցների տվյալներն են հայտնվել վտանգի տակ: Միջադեպի կապակցությամբ NASA-ն որոշել է աշխատակիցներին օգնել նրանց բանկային հաշիվների վերահսկման գործում:

Բացի դրանից, գործակալության ղեկավար Չարլզ Բոլդենը կարգադրել է առգրավել գաղտնի տեղեկություններ պարունակող բոլոր անպաշտպան նոութբուքերը եւ մինչեւ դեկտեմբերի 21-ը ավարտել ծրագրային ապահովման նորացումը: Աշխատակիցներին նաեւ հիշեցրել են, որ վտանգավոր է գաղտնի տվյալները պահպանել սմարթֆոնների եւ այլ բջջային սարքերի վրա:

2012-ի մարտին Քենեդիի անվան տիեզերական կենտրոնից գողացել էին 2300 աշխատակիցների եւ ուսանողների անձնական տվյալները պարունակող նոութբուքը: Ավելի վաղ NASA-ի գլխավոր տեսուչը հաշվարկել էր, որ 2009-ի ապրիլից մինչեւ 2011-ի ապրիլ գերատեսչությունը կորցրել է 48 նոութբուք եւ բջջային սարք, որոնցից շատերը պարունակում էին գաղտնի տեղեկություններ:

# Պաղեստինցիների պատասխան գործողությունները խուճապ են առաջացրել Իսրայելում

*1-ին էջից*

**Սակայն երեկ առավոտյան «Համասն» ու նրա ռազմական թեւը հանդիսացող Քասսամի բրիգադները, համարելով Իսրայելի ղեկավարների արտահայտությունները պատերազմի հայտարարություն, դիմում են պատասխան գործողությունների: Ինտենսիվ հրթիռակոծության են ենթարկում ինչպես Գազային սահմանակից Իսրայելի բնակավայրերն ու Այսրհորդանանում տեղակայված իսրայելական ռազմական օբյեկտները, այնպես էլ՝ Թել Ավիվը: Ալ Քասսամը տեղեկացնում է, որ առավոտյան ընդամենը 1 ժամում Գազայից 121 հրթիռ է արձակվել իսրայելական բնակավայրերի ու օբյեկտների վրա, 5-ը՝ Թել Ավիվի:**

**Հրթիռակոծության հետեւանքով մահանում է 3 իսրայելցի, 6 զինծառայող վիրավորվում: Այս պայմաններում Իսրայելը շուտափույթ դիմում է Եգիպտոսին, որ պաղեստինցի խմբավորումներին համոզի հրադադար հաստատելու հարցում: Բայց ապարդյուն: Կահիրեն մերժում է հրադադարի անցյալ շաբաթվա ձեռնարկումներից հետո Գազայի վրա հարձակում ձեռնարկած Նաթանյահուի կառավարության դիմումը:**

**«Համարեցը» Գազայի վրա հարձակումները դադարեցնելու կոչ է անում իր կառավարությանը, իսկ իսրայելցի ականատեսները, ինչպես «Դունյա Բուլթենի» կայքէջն է նշել, հաստատում են Իսրայելի հրթիռակոծումը Գազայից եւ ընդգծում, որ դա եղել է հզոր եւ խուճապ է պատճառել ժողովրդին:**



# ՉԿԿ նոր ղեկավարը խոստանում է երկրի ավելի արագ զարգացում



**Չինաստանի Կոմկուսի 18-րդ համագումարում ՉԿԿ նոր գլխավոր քարտուղար ընտրված Սի Ցզինպինի թեկնածությունը երեկ հաստատվել է նորացված Կենտկոմի առաջին լիագումար նիստում: Այդ մասին հաղորդում է «Ֆրանսպրես» գործակալությունը:**

**ՉԿԿ ղեկավարի պաշտոնում Սի Ցզինպինը կփոխարինի Հու Ցզինտաոյին: Ցզինպինը Ցզինտաոյին կփոխարինի նաեւ Չինաստանի նախագահի պաշտոնում:**

**Սի Ցզինպինը նշանակվել է նաեւ Կենտրոնական ռազմական խորհրդի նախագահի պաշտոնում, փոխարինելով Հու Ցզինտաոյին:**

**Կենտկոմի նորացված կազմում ընդգրկվել է նաեւ Լի Կեցյանը, որը, ինչպես սպասվում է, կնշանակվի վարչապետի պաշտոնում, փոխարինելով Վեն Ցզյաբոյին: Ցզինպինի եւ Կեցյանի թեկնածությունները 2013-ի մարտին պետք է հաստատվեն ՉԺՀ խորհրդարանում:**

**Կոմկուսի նոր գլխավոր քարտուղար Սի Ցզինպինը երեկ ունեցած իր առաջին հրապարակային ելույթում խոսել է Չինաստանի առաջիկա տարիների զարգացման հիմնական ուղղությունների մասին: «Նոր պատմական ժամանակահատվածում մենք դարձյալ կբախվենք շատ մարտահրավերների: Դա կլինի նոր փորձություն: Կպայքարենք կաշառակերության, բյուրոկրատիզմի դեմ, կլուծենք ժողովրդին հուզող խնդիրները: Դա պետք է լինի ամբողջ կուսակցության գործը», մասնավորապես ասել է նորընտիր գլխավոր քարտուղարը:**

**«Չինաստանի կոմունիստական կուսակցությունը գլխավորեց ժողովրդական շարժումը, հետմնաց Չինաստանը դուրս բերեց առաջադիմության ճանապարհ, չինական ազգի վերածնունդը սկսվել է: Մենք գնում ենք դեպի մեծ ու պայծառ ապագան», շարունակել է Սի Ցզինպինը:**

**Կուսակցության տնտեսական ուղեգծի սոցիալական ուղղվածության մասին նա խոսել է պարզ, ամենքին հասկանալի բառերով: «Այս կյանքում ամեն ինչ կախված է աշխատանքից, ուստի մեր պատասխանատվությունն է կուսակցությանը եւ ժողովրդին ուղղորդել գաղափարախոսական կապանքներից հետագա ազատագրման ճանապարհով, լուծել ժողովրդին հուզող խնդիրները եւ ժողովրդին տանել առաջադիմության ու կենսամակարդակի բարձրացման ուղիով», ամփոփել է ՉԺՀ նոր ղեկավարը:**

# Ամերիկացի ջիհադիստ ռեպերը՝ թիվ 1 ահաբեկիչ



**Մի երիտասարդ ամերիկացի հայտնվել է ամենավտանգավոր ահաբեկիչների ցանկում, այնտեղ զբաղեցնելով սպանված Ուսամա բեն Լադենի տեղը: Այդ մասին հաղորդվում է ՀԴԲ կայքէջում: Օմար Շաֆիկ Համմամին մեծացել է Ալաբամայի նահանգում եւ վտանգ է ներկայացնում այն պատճառով, որ ձայնագրում է ջիհադիստական ռեպ, որը կարող է անգլախոս երիտասարդությանը դրդել մտնելու ահաբեկիչների շարքերը:**

**28-ամյա Համմամին ինքնակենսագրության մեջ գրել է, որ ինքը Ալաբամայում անցկացրել է անհոգ մանկություն: Աստիճաբար պետս գործակալությունը մեջբերում է որոնվող ահաբեկչի այն խոսքերը, որ ինքը բռնկուն բնավորությունը ժառանգել է իր ամերիկուհի մորից եւ սիրիացի հորից: Արդեն մանկապարտեզում Համմամին հայտնի էր իր կոշտ վարքագծով: Մինչեւ օրս նա մնում է ԱՄՆ քաղաքացի, թեեւ վաղուց ԱՄՆ-ում չի բնակվում: Նա սովորել է համալսարանում, բայց ուսումը կիսատ է թողել սալաֆիստների հետ ծանոթանալուց հետո: ՀԴԲ-ին հայտնի է, որ 2006 թվականից նա կապեր ունի ահաբեկիչների հետ:**

**Ներկայումս Օմար Համմամիին համարում են «Ալ Ղաիդայի» հետ կապված սոմալիական «Աշ Շաբաբ» խմբավորման պարագլուխը: Անգլերենին հիանալի տիրապետող այդ ամերիկացին ռեպ ոճով քարոզչական երգեր է ձայնագրում ջիհադի եւ իսլամի մասին: Նա ունի այդ կարգի առնվազն 6 երգ, նշում է ABC հեռուստաալիքը: Հատուկ ծառայությունները երկյուղներ ունեն, որ նրա ստեղծագործությունը կարող է անգլախոս երիտասարդներին դրդել սրբազան պատերազմի՝ ջիհադի: Նրա երգերը տեսահոլովակները բավական հայտնի են համացանցում: Դրանցից մեկը ներկայումս կարելի է գտնել YouTube-ում:**

**ՀԴԲ-ի ցանկում ամենավտանգավոր ահաբեկիչների թիվը 31 է, բայց առավել վտանգավորները 10 հոգի են: 2011-ին Բեն Լադենի սպանությունից հետո տասնյակում ազատված առաջատարի տեղը զբաղեցնում է Համմամին:**

ԹՈՒՐՔԵՐԵՆ

# Թուրքիայում Սայաթ-Նովային նվիրված գիրք կհրատարակվի



Թուրքիայի մշակույթի եւ զբոսաշրջության նախարար **Էրթուղրուլ Գյունայը** հայտարարել է, որ հայ երաժշտության ականավոր դեմքերից մեկի՝ Սայաթ-Նովայի կյանքին եւ ստեղծագործություններին նվիրված գիրք կհրատարակվի:

Ըստ թուրքական «Հյուրիյեթ» (Hurriyet) էլեկտրոնային պարբերականի՝ վերոնշյալ գրքի հրատարակման համար արդեն տարվում են նախապատրաստական աշխատանքներ:

Թուրք նախարարը նշել է, որ իրենք մեծ նշանակություն են տալիս տարբեր մշակույթները ներկայացնող գործիչների ստեղծագործությունների հրատարակմանը:

ԳԱՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ
(աղբյուր՝ panorama.am)

# «Ոսկե ծիրան»-ն անիվների վրա

**Օրերս ֆիլմեր առանց սահմանների ծրագրով՝ «Ոսկե ծիրան» կինոփառատոնը հյուրընկալվեց Մինսկի 19-րդ «Լիստոպադ» միջազգային կինոփառատոնին: Փառատոնին ցուցադրվեցին «Ժաննան եւ ձայները» ու «Եթե բոլորը» ֆիլմերը:**

**«Ոսկե ծիրան»-ն անիվների վրա ծրագիրը նոյեմբերի 16-ին կմեկնարկի Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքում, որը կտեւի մինչեւ նոյեմբերի 18-ը: Նշենք, որ փառատոնի բացումը տեղի կունենա Եղեգնաձորի մշակույթի տանը ռեժիսոր Նատալյա Բելյաուսկենեի, պրոդյուսեր, դերասան Միքայել Պողոսյանի «Եթե բոլորը» ֆիլմով:**

**Իսկ հաջորդ օրերին կցուցադրվեն՝ Սյուզան Խարտալյանի «Տատիկիս դաջվածքները», Արթուր Խուդոյանի «Ինձ աշուղ են ասում», Կասիանա Տեր-Հարությունյանի, Սեզար եւ Գարի Կանանյանների «Հայկական ռապսոդիա» վավերագրական ֆիլմերը, ինչպես նաեւ «Ոսկե ծիրան» 9-րդ Երեւանի միջազգային կինոփառատոնի Լիամետրաժ ֆիլմերի մրցութային անվանակարգում առաջին մրցանակի արժանացած՝ Ս. Լոզնիցայի «Մշուշում» ֆիլմը:**

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Եղեգնաձորում բացվել է հայ եւ իրանցի արվեստագետների համատեղ ցուցահանդես



Եղեգնաձորի երկրագիտական թանգարանում բացվել է հայ եւ իրանցի արվեստագետների ստեղծագործությունների համատեղ ցուցահանդեսը: Ցուցահանդեսում ներկայացված են գեղանկարներ եւ ձեռքի աշխատանքներ: Այս մասին հայտնեցին Վայոց Ձորի մարզպետարանի մամուլի ծառայությունից:

Ցուցահանդեսի բացմանը ներկա են եղել Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը, ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպան Մոհամմադ Ռեիսին եւ ԻԻՀ Արեւմտյան Ատրպատականի Խոյի կուսակալ Օլան Օսեյն Ամարին:

Նրանք հաջողություններ են մաղթել ՀՀ Վայոց Ձորի մարզի եւ ԻԻՀ Արեւմտյան Ատրպատականի Խոյի կուսակալության միջեւ հաստատված բարեկամական հարաբերություններին:

ԳԱՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ
(աղբյուր՝ panorama.am)

Ի ՀՈՒՇ

# Արմինա Մարտիրոսյան (1949-2012)

ԱՄՆ-ից ստացվեց մի չափազանց տխրեցուցիչ լուր. նոյեմբերի 3-ին Էնն Արբորում (Միչիգան) կյանքի 63-րդ տարում վախճանվել է Արմինա Մարտիրոսյանը, յոթ ու կես ամիս կրծքի քաղցկեղի դեմ մղած պայքարից հետո: Նրա անունը ծանոթ էր հատկապես Միչիգանի եւ Ֆիլադելֆիայի, որոշ չափով նաեւ՝ Հայաստանի երաժշտական շրջանակներում, որպես դաշնակահարուհի եւ դաշնամուրի ուսուցիչ, ով քառասուն տարի ուսանողներին եւ դաշնամուրի ուսուցիչներին դասավանդում էր Սունձուկի մեթոդով:



Ավարտած լինելով ամերիկյան հեղինակավոր Օբերլին քոլեջը՝ նա անդամակցում էր միջազգային Սունձուկի ընկերակցությանը, դաշնամուրի դասավանդման ամսագրերում հանդես գալիս բազմաթիվ հոդվածներով, սակայն նրա գլխավոր ձեռքբերումը «Սյունիի երաժշտության պահպանություն» հասարակական կազմակերպության ստեղծումն էր (www.suniproject.org), որի նպատակն է պահպանել, հրատարակել եւ տարածել ամուսնու մեծ հոր՝ հայ նշանավոր երգահան Գրիգոր Միրզայան Սյունիի (1876-1939) ժառանգությունը:

Արմինան ծնվել էր 1949-ին, Փրովիդենսում (Ռիչմոնդ), Տիրան Մարտիրոսյանի (ծնունդով արաբկիրցի) եւ Վանուհի Գազանճյանի (ծնունդով վանեցի) ընտանիքում: Մայրական պապը՝ Լեւոն Գազանճյանը, հանդես է եկել Վանի մասին գրքով: Ծնողների, Արաքսի քրոջ եւ Արա եղբոր հետ նա տեղափոխվել է իր ընտանիքի հետ Ֆիլադելֆիայի Ֆեյրլես Հիլ արվարձանը, ավարտել տեղի Փենսբըրի դպրոցը: Մանկուց նվիրված լինելով դաշնամուրին՝ Արմինան դեռեւս դեռահասության տարիներին հանդես է եկել Ֆիլադելֆիայի երաժշտական ակադեմիայում եւ արժանացել լսման Նյու Յորքի Քարնեգի սրահում: Նա ընդունվել է Օբերլին կոնսերվատորիան՝ դաշնամուր ուսանելու, բայց շուտով տեղափոխվել է Օբերլին քոլեջը, քանի որ նրա հետաքրքրությունները ներառել են նաեւ պատմությունը, գրականությունը, քաղաքական գիտությունները եւ մարդաբանությունը: Սակայն անգամ 1970 թվականին քոլեջն ավարտելուց հետո Արմինա Մարտիրոսյանը շարունակել է սովորել դաշնամուրային մանկավարժություն եւ հայտնաբերել է Սունձուկի մեթոդը, որին էլ նվիրել է իր կյանքը: 1971-ին նա ամուսնացել է Օբերլին քոլեջի պատմության, ներկայումս՝ Միչիգանի համալսարանի սոցիալական եւ քաղաքական պատմության պրոֆեսոր Ռոնալդ Սյունիի հետ, բախտավորվել երկու դուստրերով՝ Սեւան-Սիրանույշ եւ Անուշ-Թամար: Այս երկու գեղեցկատես աղջիկներն էլ թեեւ ունեն երաժշտական կրթություն եւ հանդես են եկել ելույթներով, սակայն նվիրված են այլ բնագավառների, Սեւանը՝ կենսաբանության, Անուշը՝ արեւելագիտության (վերջերս ավարտել է մագիստրատուրան Ստամբուլի Սաբանջը համալսարանում):

Ջերմ, սրտալիր, աշխույժ եւ մարդամոտ Արմինա Մարտիրոսյանը, մի ընկերոջ բնութագրմամբ, «ինքնիշխան կին» էր, որը հստակ քայլում էր սեփական ուղիով, չուներ հակառակորդներ ու խորապես սիրված էր հարյուրավոր ընկերների եւ հարազատների կողմից: Նա ջերմեռանդորեն փարված էր իր հայկական արմատներին՝ ակտիվորեն մասնակցելով Միչիգանի եւ Ֆիլադելֆիայի հայկական միջոցառումներին: Միչիգանի համալսարանին թեկուզ կարճատեւ համագործակցած յուրաքանչյուր հայորդի կարող է վկայել այն ուշադրության մասին, որ Արմինան տածում էր հայրենակից հյուրերի հանդեպ: Անցյալ տարի աշնան երեք ամիսներին լինելով Միչիգանի համալսարանի հայագիտական բաժնի հյուր դասախոս՝ ինքս նույնպես բազմիցս վայելել եմ Արմինա Մարտիրոսյանի սրտագին ընկերակցությունը, հյուրասիրությունը նրա ջերմ օջախի, որի շեմին հայատառ գրությունը ազդարարում էր՝ ԲԱՐԻ ԵԿԱՔ: Հպարտ էր, որ ընտանիքի բոլոր անդամներով ստացել են Հայաստանի Հանրապետության անձնագրեր: Մոր պես հոգատար էր իմ հանդեպ, կեցությանս հարցերով, ծանոթացնում էր իր շրջապատի հետ, իր հետ տանում երաժշտական միջոցառումների: Հաճախ էր պատմում այդ տարի ամռանը Արեւմտյան Հայաստան կատարած իրենց ուղեւորության մասին, ինչպես նաեւ երանությամբ հիշում 2009 թվականի դեկտեմբերին Երեւանում, Թումանյանի տուն-թանգարանում կայացած Գրիգոր Սյունիին նվիրված երեկոն, որի ընթացքում ամուսինը կյանքում առաջին անգամ հանդես եկավ հայերեն բանախոսությամբ, իսկ ինքը՝ Արմինան եւ դուստրերը կատարեցին Սյունիի ստեղծագործություններից: Հայաստան վերադառնալուցս առաջ նա ինձ վստահեց Գրիգոր Սյունիի խմբերգերի՝ հանգուցյալ երաժշտագետ Ռոբերտ Աթայանի կազմած մեքենագիր ուսումնասիրություն-ժողովածուի լուսապատճենը, որի հրատարակությունն Արմինայի երկար տարիների փայփայած երազանքն էր: Այդ գործը չէր իրականանում, քանի որ աշխատության բնագիրը կորել էր, եւ Սյունի ընտանիքը տարիներ շարունակ ապարդյուն որոնում էր այն: Տեսնելով, որ լուսապատճենը գրեթե ամբողջական է, մենք որոշեցինք սկսել աշխատությունը տպագրության պատրաստելու աշխատանքը:

Ցավոք, Արմինային չպետք է վիճակվեր տեսնել իր երազանքի իրականացումը: Ով կմտածեր, որ այդ անդադրում, կյանքով լի կնոջ մեջ, որը տասնամյակներ շարունակ հետեւում էր խիստ սննդակարգի՝ օգտագործելով միայն հում բուսական սնունդ, բույն է դրել չար հիվանդությունը: Սակայն մինչեւ վերջ նա մնաց հոգեկան խաղաղության մեջ, կյանքի վերջին օրերին էլ շարունակելով ոգեւորությամբ աշխատել Աթայանի ձեռագրի մեր անգլերեն թարգմանության խմբագրման վրա: Հոգուս պարտքն է՝ հաջորդ տարվա ընթացքում ավարտին հասցնել այդ մեծ նախագիծը՝ արդեն ձոնելով սիրելի Արմինա Մարտիրոսյանի խնկելի հիշատակին...

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

# Կուպելյանը Հայաստանի մասին պատմող «Բյուզանդիայի Արեւելք»-ը գրաֆիկական նորավեպը կամփոփի մեկ ֆիլմում

**Միացյալ Նահանգների Գլենդելի համայնքային քոլեջի El Vaquero ուսանողական թերթն անդրադարձել է հոլիվուդյան վիզուալ էֆեկտների հեղինակ եւ ռեժիսոր հայազգի Ռոջեր Կուպելյանին եւ Հայաստանի մասին պատմող նրա «Բյուզանդիայի Արեւելք» ֆիլմի նկարահանման աշխատանքներին: Ինչպես փոխանցում է «Արմենպրես»-ը՝ El Vaquero-ն մասնավորապես նշել է. ««Բյուզանդիայի Արեւելք»-ը Կուպելյանի վերջերս լույս տեսած գրաֆիկական նորավեպն է: Նա փորձում է այն վերածել ոչ միայն վավերագրական շարքի, այլ նաեւ նկարահանել մեկ ընդհանուր ֆիլմ»:**

**Կուպելյանի նախագիծը՝ «Բյուզանդիայի Արեւելք» ֆիլմը, պատմում է Հայաստանի մասին՝ քրիստոնեության ընդունումից մինչեւ Ավարայրի ճակատամարտը եւ դրան հաջորդող դեպքերը: Ժամանակագրական առումով ֆիլմը սկսվում է մ. թ. 301 թվականին Հայաստանում քրիստոնեության ընդունումից մինչեւ մ.թ. 451 թ-ի Ավարայրի ճակատամարտի մասին պատմություններով: «Ես ցանկանում էի ստեղծել Վարդան, որը շատ ավելի տարբեր էր, քան այն մեկը, որին պատմությունն է բնութագրում: Ես ցանկանում էի ստեղծել Վարդան, որի շուրջ կկարողանային իրականացնել գործողություններ: Ուզում էի ստեղծել մեկին, ով ցեխերի մեջ է՝ ռազմի դաշտում եւ ով պայքարում է կյանքի համար», նշել է Կուպելյանը:**

**Թերթը նշում է, որ Կուպելյանը Վարդանի առաջին պատկերը նկարել է Նոր Զելանդիայում «Մատանիների տիրակալը» ֆիլմի նկարահանումների ժամանակ: ««Մատանիների տիրակալը» ֆիլմի աշխատանքները ներշնչել են Կուպելյանին գրել «Բյուզանդիայի Արեւլեք» ֆիլմի սցենարը, որը նաեւ լույս է տեսել գրաֆիկական նորավեպի ձեւաչափով: Այս պատմության հանդեպ կիրքը Կուպելյանի մեջ մանկությունից է գալիս: Մեծանալով Աֆրիկայում՝ Կուպելյանը տարածաշրջանում եղել է այն քիչ աֆրիկահայ երեխաներից մեկը», նշում է թերթը՝ մեջբերելով Կուպելյանի խոսքերը. «Առանձնանալով մանուկների մյուս խմբերից՝ ես հայ երեխա էի Աֆրիկայում: Սա այն տեղն էր, որտեղից եկել է իմ ինքնության զգացումը: Ծնողներս վստահ էին՝ ես հասկանում էի մեր պատմությունը, դիցաբանությունը եւ մշակույթը: Ես գիտեի՝ որտեղից եմ սերում»:**

**Նյութում անդրադարձ է կատարվել նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը եւ դրա մասին պատմող «Մութ անտառը լեռներում» Կուպելյանի ֆիլմին, որը նրա առաջին վավերագրականն ու առաջին ռեժիսորական աշխատանքն է: Հայ ռեժիսորը ֆիլմը սկսել է նկարահանել 1990-ականներին: «Ավետիս Սանգիգյանն ամերիկահայ վետերան է, ով մասնակցել է արցախյան հակամարտությանը: Նա մեկ տարուց ավելի կռվել է թշնամու դեմ ճակատում: Կարո Քահգեցյանն Ավետիսի ընկերն է եւ Կուպելյանի ֆիլմի գլխավոր հերոսը: Դժբախտաբար, նա պատերազմից հետո մահացավ», նշում է թերթը եւ նյութը եզրափակելիս մեջբերում Կուպելյանի խոսքերը. «Ավետիսի եւ Կարոյի խիզախությունը նրանց հերոսներ դարձրեց: Ես կցանկանայի, որ մեր հաջորդ սերունդը իրեն տեսներ հերոսի դերում: Մենք պետք է եւս մեկ անգամ ընդունենք եւ տեսանելի դարձնենք այն, թե ինչ է նշանակում լինել հերոսաբար մարտնչող ազգ»:**

*«Արմենպրես»*

# Հայ շախմատիստներից երեքն առաջատարների խմբում են



Մեկօրյա հանգստից հետո Սլովենիայում ընթացող շախմատի աշխարհի պատանեկան առաջնության մասնակիցները կրկին նստեցին խաղասեղանների շուրջն՝ անցկացնելով 7-րդ տուրի հանդիպումները:

Մինչեւ 18 տարեկանների մրցաշարում Հովհաննես Գաբուզյանը հաշտություն կնքեց իտալացի Դավիթ Գույջարոյի հետ ու վաստակեց 5,5 միավոր: Նա ընթանում է 4-րդ տեղում՝ կես միավորով հետ մնալով աղյուսակը գլխավորող լեհ Դարիուշ Շվարցից: 5 միավորով 10-րդ տեղում է Կարեն Գրիգորյանը, որը ոչ-ոքի խաղաց պերուացի Խորխե Գորիի հետ: Տարիֆային այս խմբում հանդես եկող Հայաստանի 3-րդ ներկայացուցիչը՝ Տիգրան Ս. Պետրոսյանն ունի 4 միավոր եւ ընթանում է 44-րդ տեղում:

Մինչեւ 16 տարեկանների մրցաշարի առաջատարների խմբում է Տիգրան Հարությունյանը, որը 7 հնարավորից վաստակած 5,5 միավորով 7-րդ տեղում է: Նա ոչ-ոքի խաղաց գերմանացի Դենիս Վագների հետ: Առաջատարը ռուսաստանցի Ուրի Ելիսեեւն է, որը հաղթեց Իրակլի Բերաձեին:

7-րդ տուրն անհաջող էր մինչեւ 10 տարեկանների մրցաշարի մասնակից Շանթ Սարգսյանի համար, որն առաջին պարտությունը կրեց վիետնամցի Ան Նգուենի հետ մրցավեճում: Վերջինս 7 միավորով շարունակեց միանձնյա գլխավորել աղյուսակը: 6-ական միավոր են վաստակել Վիկտոր Մատվիշենը, Դավիթ Գավրիլեսկուն եւ Աբդուլա Գադիմբայլին: Իսկ Սարգսյանը 5,5 միավորով նահանջեց 5-րդ հորիզոնական:

Հաջող են հանդես գալիս նաեւ Հայկ Մարտիրոսյանն ու Մանուել Պետրոսյանը՝ վաստակելով 5-ական միավոր: Հայկը մինչեւ 12 տարեկանների մրցաշարում հաշտություն կնքեց Դենիս Մախնյովի հետ, իսկ Մանուելը մինչեւ 14 տարեկանների մրցաշարում հաղթեց Միգել Սանթոսին:

Աղջիկներից առայժմ լավագույն արդյունքն ունի Սիրանուշ Ղուկասյանը, որը մինչեւ 14 տարեկանների մրցաշարում վաստակել է 4,5 միավոր: 4-ական միավոր ունեն Մարիա Գեւորգյանը (մինչեւ 18 տ.), Սուսաննա Գաբոյանը (մինչեւ 16 տ.) եւ Անահիտ Մկրտչյանը (մինչեւ 10 տ.):

# Զլատան Իբրահիմովիչի ֆուտբոլային պոկերը



Չորեքշաբթին ՖԻՖԱ-ի խաղացանկով նախատեսված ընկերական հանդիպումների անցկացման օրն էր: Ընկերական մրցախաղերի իսկական հերոսը դարձավ շվեդ հարձակվող Զլատան Իբրահիմովիչը, որը 4 անգամ գրավեց Անգլիայի հավաքականի դարպասը: Նրա ֆանտաստիկ խաղի շնորհիվ շվեդները սեփական հարկի տակ 4-2 հաշվով պարտության մատնեցին անգլիացիներին՝ ռեւանշի հասնելով Եվրո-2012-ում կրած պարտության դիմաց: Ընդ որում մինչեւ 76-րդ րոպեն Անգլիայի հավաքականը խաղը շահում էր 2-1 հաշվով: Սակայն մնացած 15 րոպեներին Զլատան Իբրահիմովիչը մեկը մյուսի հետեւից 3 անգամ գրավեց անգլիացիների դարպասը: Գոլերից մեկը նա խփեց շրջադարձ հարվածով՝ դառնալով հիասքանչ գոլի հեղինակ:

Շվեդիայի հավաքականի ավագը ազգային ընտրանիում 85-րդ խաղն անցկացրեց՝ գոլերի թիվը հասցնելով 39-ի: Նա շրջանցեց հավաքականի նախկին անվանի ֆուտբոլիստ Հենրիկ Լարսոնի ցուցանիշը, որը 38 գոլի հեղինակ էր դարձել: Հավաքականի բոլոր տարիների լավագույն ռմբարկուների ցանկում ներկայումս Զլատան Իբրահիմովիչը զբաղեցնում է 3-րդ հորիզոնականը: Լավագույն ռմբարկուն Սվեն Ռիդելն է, որը 1923-32-ին հավաքականի կազմում անցկացրած 43 հանդիպումներում 49 գոլ է խփել: 2-րդ ցուցանիշն ունի շվեդական ֆուտբոլի մեկ այլ հանրահայտ ռմբարկու Գունար Նորդալը, որը հավաքականում 1942-1948-ին անցկացրած 33 խաղում 43 գոլ է խփել:

Իբրահիմովիչը Շվեդիայի հավաքականում 2-րդ անգամ ֆուտբոլային պոկերի հեղինակ դարձավ: Առաջին անգամ նրան հաջողվել էր մեկ խաղում 4 գոլ խփել 2004-ի սեպտեմբերի 9-ին Մալթայի հավաքականի դարպասը:

Աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում Հայաստանի հավաքականի մրցակիցներից մեկը՝ Իտալիայի ընտրանին սեփական հարկի տակ 1-2 հաշվով զիջեց ֆրանսիացիներին: Բուլղարացիներն էլ Սոֆիայում 0-1 հաշվով պարտվեցին ուկրաինացիներին, որոնց գործողությունները ղեկավարում էր Ալեքսանդր Զավարովը: Իսկ ահա ՀՀ հավաքականի առաջիկա մրցակից չեխերը սեփական հարկի տակ 3-0 հաշվով պարտության մատնեցին սլովակներին: Դանիայի ընտրանին էլ հյուրընկալվելիս ոչ-ոքի (1-1) խաղաց թուրքերի հետ: Մալթայի հավաքականը մրցակցի հարկի տակ 0-1 հաշվով հաղթեց Լիխտենշտեյնին:

Հոլանդիա-Գերմանիա մրցախաղում 2 հավաքականների մարզիչներն էլ մի խումբ ֆուտբոլիստների փորձարկեցին, իսկ դարպասները գրավել ոչ մեկին չհաջողվեց: Ռուսաստանի հավաքականը, որ ընտրական մրցաշարի բոլոր 4 խաղերում էլ հաղթել է, այս անգամ ԱՄՆ-ի հավաքականի հետ ընկերական մրցախաղում բավարարվեց ոչ-ոքի արդյունքով (2-2): Ռուսները հաղթանակը ձեռքից բաց թողեցին ավելացված ժամանակում:

Ընկերական մյուս հանդիպումներում գրանցվեցին հետեւյալ արդյունքները. Լեհաստան-Ուրուգվայ՝ 1-3, Չիլի-Սերբիա՝ 1-3, Ավստրիա-Կոտ դ՛Իվուար՝ 0-3, Ալբանիա-Կամերուն՝ 0-0, Ռումինիա-Բելգիա՝ 2-1, Հարավային Կորեա-Ավստրալիա՝ 1-2, ԱՄԷ-Էստոնիա՝ 2-1, Կիպրոս-Ֆինլանդիա՝ 0-3, Ալժիր-Բոսնիա՝ 0-1, Անդորրա-Իսլանդիա՝ 0-2, Հունգարիա-Նորվեգիա՝ 0-2, Վրաստան-Եգիպտոս՝ 0-0, Մակեդոնիա-Սլովենիա՝ 3-2, Լյուքսեմբուրգ-Շոտլանդիա՝ 1-2, Իռլանդիա-Հունաստան՝ 0-1, Պանամա-Իսպանիա՝ 1-5:

# Հյուսիսիռլանդացիները փրկվեցին պարտությունից

2 հանդիպումներով ավարտվեց ֆուտբոլի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարի ընթացիկ մրցաշրջանի խաղացանկով նախատեսված փուլը: H խմբի առաջատար Չեռնոգորիայի ընտրանին սեփական հարկի տակ 3-0 հաշվով հաղթեց Սան Մարինոյի հավաքականին: Չեռնոգորցիները 4 խաղից հետո վաստակել են 10 միավոր: 2-րդ տեղում 8 միավորով Անգլիայի հավաքականն է:

F խմբում Ադրբեջանի հավաքականը Բելֆաստում ձեռքից բաց թողեց հաղթանակը: Արդեն 5-րդ րոպեին Ալիեւը գրավեց հյուսիսիռլանդացիների դարպասը: Եվ միայն ավելացված ժամանակի 6-րդ րոպեին Դեւիդ Խիլին տուգանային հարվածով դաշտի տերերին փրկեց պարտությունից:

F խմբում 4 խաղից հետո 12 միավորով առաջատարը Ռուսաստանի հավաքականն է: 7-ական միավոր ունեն պորտուգալացիներն ու Իսրայելի հավաքականը: Ադրբեջանը 2 միավորով նախավերջին՝ 5-րդ տեղում է:

ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

# Դանիելյանը պարտվեց, Մկրտչյանը լրացուցիչ մրցախաղ կանցկացնի

Խանտի Մանսիյսկում ընթացող շախմատի աշխարհի կանանց առաջնության 2-րդ փուլի 2-րդ պարտիայում էլ պարտվելով Հարիկա Դրոնավալիին, Էլինա Դանիելյանը դուրս մնաց հետագա պայքարից:

Լիլիթ Մկրտչյանը ռուսաստանցի Նադեժդա Կոսինցեւայի հետ 2-րդ պարտիան էլ ավարտեց ոչ-ոքի: Մրցակցուհիներն արդեն 18-րդ քայլին հաշտություն կնքեցին: Նրանց մրցավեճի ելքը կվճռվի այսօր կայանալիք արագ շախմատի մրցախաղում:

Հաջորդ փուլի ուղեգիր նվաճեց Անտոանետա Ստեֆանովան՝ հաղթելով Ջժու Չենին՝ 1,5-0,5: Անակնկալ էր Համպի Կոներուի անհաջողությունը Նատալյա Ժուկովայի հետ մրցավեճում: Նա պարտվեց 0-2 հաշվով ու դուրս մնաց հետագա պայքարից: Մարիա Մուզիչուկը 1,5-0,5 հաշվով պարտության մատնեց Մարիզա Արիբասին: Տատյանա Կոսինցեւան էլ նույնպիսի հաշվով առավելության հասավ Հոանգ Տրանգի նկատմամբ: Հաջորդ փուլ մտավ նաեւ Ալիսա Գալլյամովան, որը հաղթեց Վալենտինա Գունինային: Իսկ ահա աշխարհի չեմպիոնուհի Հոու Յիֆանի եւ Մոնիկա Սոչկոյի մրցավեճի ելքը կորոշվի լրացուցիչ մրցախաղում: 2-րդ պարտիայում Յիֆանը պարտվեց մրցակցուհուն:

# Արոնյանն ու Մովսիսյանը կխաղան Վեյք Ան Զեեում

Լեւոն Արոնյանն ու Սերգեյ Մովսիսյանը կմասնակցեն 2013-ի հունվարին հոլանդական Վեյք Ան Զեե քաղաքում կայանալիք շախմատի ավանդական մրցաշարին: Արոնյանը հանդես կգա ուժեղագույնների մրցաշարում, որտեղ նրա մրցակիցների թվում կլինեն Մագնուս Կառլսենը, Վիշվանաթան Անանդը, Ֆաբիանո Կարուանան, Սերգեյ Կարյակինը: Իսկ Մովսիսյանը կմասնակցի B խմբի մրցաշարին, որի կազմը եւս բավականին ուժեղ է:

# Պետրոսյանն առաջին հաղթանակը տոնեց

Արաբական Միացյալ Էմիրությունների Ֆուջեյրա քաղաքում ընթացող շախմատի մրցաշարի 2-րդ տուրում Տիգրան Պետրոսյանն առաջին հաղթանակը տոնեց: Նրա մրցակիցը հնդիկ միջազգային վարպետ Վիշնու Պրասաննն էր: Զավեն Անդրեասյանը հաշտություն կնքեց ֆրանսիացի Էթիեն Բաքրոյի հետ:

2 տուրից հետո հայ շախմատիստներն ունեն 1,5-ական միավոր: 2-ական միավորով առաջատարներն են ուկրաինացիներ Յարոսլավ Ժերեբուխը, Անդրեյ Սումեցը, Ֆրանսիան ներկայացնող Վլադիսլավ Տկաչովը, հնդիկ Շեխար Գանգուլին եւ չինացի Ռույիուան Յուն:

# Մեսին Իսպանիայի առաջնության կրկնակի դափնեկիր




«Բարսելոնի» հարձակվող Լիոնել Մեսին ճանաչվել է Իսպանիայի 2011/12-ի մրցաշրջանի լավագույն ֆուտբոլիստ: Հարցմանը բացի թիմերի մարզիչներից, մասնակցել են նաեւ բոլոր ֆուտբոլիստները:

Լավագույն մարզիչ է ճանաչվել «Բարսելոնի» այժմ արդեն նախկին գլխավոր մարզիչ Խոսեպ Գվարդիոլան: Լավագույն դարպասապահի մրցանակը հանձնվել է Իկեր Կասիլյասին («Ռեալ»): Նրա թիմակիցներ Սերխիո Ռամոսն ու Խաբի Ալոնսոն ճանաչվել են համապատասխանաբար լավագույն պաշտպան եւ կիսապաշտպան: Հարձակողական ոճի լավագույն կիսապաշտպանի մրցանակը ստացել է Անդրես Ինիեստան («Բարսելոն»): Իսկ լավագույն հարձակվողը բնականաբար Լիոնել Մեսին է: Այնպես որ Մեսին դարձավ մրցաշրջանի կրկնակի դափնեկիր: Առաջնության հայտնություն է ճանաչվել «Մալագայի» ֆուտբոլիստ Իսկոն: Իսկ «Ազնիվ խաղի» մրցանակը հանձնվել է «Բարսելոնի» պաշտպան Կառլոս Պույոլին:

# Եվրո-2020-ը նախատեսվում է անցկացնել 13 քաղաքներում

ՈւԵՖԱ-ի նախագահ Միշել Պլատինիի նախաձեռնությամբ ենթադրվում է 2020-ի ֆուտբոլի Եվրոպայի առաջնությունն անցկացնել 13 երկրների քաղաքներում՝ Մոսկվայում, Ամստերդամում, Աթենքում, Բազելում, Բեռլինում, Բրյուսելում, Զագրեբում, Լիսաբոնում, Լոնդոնում, Մադրիդում, Փարիզում, Հռոմում եւ Ստամբուլում: Նշված բոլոր քաղաքներն էլ զարգացած ենթակառուցվածքներ ունեն, որտեղ գործում են ժամանակակից, մեծ տարողունակություն ունեցող մարզադաշտեր:

Նման ծրագրի հիմնական պատճառը ֆինանսական ճգնաժամն է: Ըստ Պլատինիի, զարգացած ենթակառուցվածքներ ունեցող տարբեր քաղաքներում Եվրոպայի առաջնության հանդիպումների անցկացումը կազմակերպիչներին ավելի էժան կարժենա, բացի այդ էլ կմեծացնի ֆուտբոլասերների հետաքրքրությունը մրցաշարի նկատմամբ: Նշենք, որ 2016-ից Եվրոպայի առաջնություններում 16-ի փոխարեն հանդես են գալու 24 հավաքականներ:

2020-ին լրանում է Եվրոպայի առաջնությունների հիմնադրման 60-ամյակը եւ Պլատինին ցանկանում է մրցակարգի նման փոփոխմամբ նշել այդ հոբելյանը: Սակայն դա չի նշանակում, որ օրինակ 2024-ի Եվրոպայի առաջնությունն էլ պետք է անցկացվի մի շարք քաղաքներում: Եթե որեւէ եվրոպական երկիր հանձն կառնի առաջնության կազմակերպման բոլոր ծախսերը միայնակ հոգալ, ապա նախապատվությունը կտրվի այդ երկրին:

Պլատինիի այս նախաձեռնությունը կքննարկվի այս տարվա դեկտեմբերի 7-ին կայանալիք ՈւԵՖԱ-ի գործկոմի նիստում: Իսկ վերջնական որոշումը կկայացվի 2013-ի հունվարին:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ Օրվա հետքերով

# «Ազերինֆորմի» «լավագույն ավանդույթները» չեն մոռացվել

Ադրբեջանական քարոզչամեքենան շատ հաճախ այնպիսի «տեղապտույտներ է տալիս», որ ակամա խղճում ես թե՛ «ղեկապետին», թե՛ հատկապես նրանց, որ լծվել են խորհրդային արտադրության «ԳԱԶ-51» հիշեցնող այդ խլյակին եւ փորձում են «առաջ մղել»՝ աղտոտելով իրենց դեմքը: Այս դերում ավելի հաճախ հայտնվում են ժամանակին Բաքվի դժոխքից մի կերպ գլուխները ազատ ռուսախոս մտավորականներ եւ լրագրողներ կամ խորհրդային պատժիչ ուժերի պաշտոնաթող սպաներ, որոնք «մի բաժակ թունդ արաղի» դիմաց ե՛ւ անցյալն են կեղծում, ե՛ւ ներկան:

Այս շարքի հերթական «զոհը» Իսրայելի հեռուստաընկերություններից մեկում ինչ-որ հաղորդաշար վարող՝ նախկին բաքվեցի եւ «ազերինֆորմական» Դավիթ Կոնն է դարձել: 1990-ի օգոստոսին թողնելով Բաքուն եւ հաստատվելով պատմական հայրենիքում, Կոնը միայն վերջերս է «կարոտախտով հիվանդացել»: Այս հարցում նրան, իհարկե, մեծապես օգնել են Բաքվից:

Ի՞նչ է հիշել նախկին բաքվեցի «ազերինֆորմականը»: Պարզվում է, նա «եղել է այնտեղ. երբ ամբոխը Ստեփանակերտից շարժվել է Աղդամի վրա, երբ այնտեղ կանայք նրանց (ո՞ւմ- Վ. Ա.) բաժանել են»: Նա «այնտեղ է եղել, երբ հայկական կողմից հնչել է առաջին կրակոցը, որի հետեւանքով սպանվել է առաջին ադրբեջանցին, դա հակամարտության առաջին կրակոցն էր»:

Նախկին բաքվեցու հիշողությամբ «ինչպե՞ս է եղել. ամբոխը շարժվել է ամբոխի վրա, նրանք կանգ են առել, վիճել, բղավել, միլիցիան փորձել է ինչ-որ բան անել եւ հանկարծ՝ կրակոց, մարդը ընկել է»: Այսօրվա ընթերցողին՝ թե՛ ադրբեջանական, թե՛ հայկական կողմերի, այս պատմությունը ոչինչ չի հուշում: Բացի՝ որ ադրբեջանական քարոզչությունը նոր սերնդին հետեւողականորեն ներշնչում է, թե հակամարտության «առաջին զոհը եղել է ադրբեջանցի, սպանվել է հայերի կողմից»:

Խոսքը 1988-ի փետրվարի 22-ի իրադարձությունների մասին է: Բայց Դավիթ Կոնը փաստերը ներկայացնում է գլխիվայր. ոչ թե Ստեփանակերտից է «ամբոխը շարժվել Աղդամի վրա», այլ Աղդամից է միքանիհազարանոց խառնամբոխը շարժվել Ասկերանի վրա՝ «հայերին դաս տալու նպատակով»: Տարածաշրջանում «ադրբեջանական գործոնի» առաջին հիշեցումն էր դա: Փաստացի ապացույցը Ադրբեջանի ղեկավարներից մեկի, հետագայում՝ ՆԳՆ նախարար Ասադովի ասածն է, թե «100 000 ադրբեջանցի պատրաստ է ամեն վայրկյան ներխուժելու եւ գերեզմանոց դարձնելու Լեռնային Ղարաբաղը»:

Սպառնալիքը հնչել է 1988-ի փետրվարի 20-ին, եւ երկու օր անց խառնամբոխը գրոհել է Ասկերանը: Նույնիսկ ժամանակի խորհրդային մամուլն է անզոր գտնվել՝ կեղծելու ակնհայտ իրողությունները: Մոսկովյան թերթերում գրվել է, որ ամբոխը դեպի Ասկերան ճանապարհին ավերել է հայկական գյուղերի խաղողի այգիները, հրկիզել Խանաբադի կոլտնտեսության էլեկտրաաղացը:

Հարձակումը կասեցվել է Ասկերանում, եւ կրակոցներ, այո, հնչել են: Բայց ո՞ր կողմից: Ադրբեջանցի քաղաքագետ Զարդուշտ Ալիզադեն «Երկրորդ հանրապետության վախճանը» գրքում, հիմք ընդունելով զոհված ադրբեջանցու հարազատների վկայությունները, փաստում է, որ նա սպանվել է... ադրբեջանցի «միլիցիոների կրակոցից»:

Շուտով կլրանա այդ ողբերգության 25-ամյակը: Քառորդ դար անց ի՞նչ իմաստ ունի եւս մեկ անգամ կեղծել փաստերը: Ի՞նչ է ուզում ասել «իլհամպրոպը»՝ որ հայերն «առաջինն են կրակել-ադրբեջանցի սպանել եւ արժանի են վրիժառությա՞ն»: Ըստ երեւույթին՝ այո, դա է ասելիքը: Բաքվում գերադասում են դա ասել ուրիշի բերանով՝ նախկին «ազերինֆորմականի»: Բայց չէ՞ որ ամեն ինչ սկսվել է հենց «Ազերինֆորմի» կեղծ-հավակնոտ-մեծապետական քարոզչությունից: Չէ՞ որ եղել է խնդիրը խաղաղ ճանապարհով հարթելու հնարավորություն: Մեկ անգամ այն բաց է թողնվել: Այսօր, ինչպես տեսնում ենք, «Ազերինֆորմի» «լավագույն ավանդույթները շարունակվում են»: Վստահաբար՝ ի վնաս ադրբեջանական ժողովրդի:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է արտաքին մրցույթ Տեղեկատվական եւ հեռահաղորդակցման տեխնոլոգիաների վարչության ծրագրավորման բաժնի «ծրագրավորող» թափուր երկու աշխատատեղերի համալրման համար:

**Աշխատանքի նպատակն է.** ՀՀ կենտրոնական բանկում ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովման նախագծում, մշակում եւ ներդնում: Ներդրված համակարգերի ուղեկցում եւ զարգացում:

**Աշխատատեղի հիմնական պարտականություններն են.**

Տեխնիկական առաջադրանքի եւ մշակված մոդելի հիման վրա համակարգչային ծրագրերի (միջին բարդության համակարգեր կամ ենթահամակարգեր) մշակում:

Տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա համակարգի առանձին մոդուլների եւ ենթակառուցվածքների մշակում:

Ծրագրային համակարգերի ներդրման հետ կապված աշխատանքների իրականացում:

**Պահանջվող կրթությունը եւ գիտելիքների շրջանակը.**

*Բարձրագույն տեխնիկական* կրթության պարագայում՝ 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ՀՀ կենտրոնական բանկում կամ 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ոչ ՀՀ կենտրոնական բանկում:

*Բարձրագույն ոչ մասնագիտական* կրթության պարագայում՝ 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ՀՀ կենտրոնական բանկում կամ 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ոչ ՀՀ կենտրոնական բանկում:

*Գիտելիքներ հետեւյալ ոլորտներում*՝ Ծրագրավորում (խորացված), ռելյացիոն տվյալների բազաների կառավարման համակարգեր (խորացված), օբյեկտ ուղղորդված ծրագրավորում (խորացված), օպերացիոն համակարգեր (միջանկյալ), ալգորիթմների տեսություն (միջանկյալ), մաթեմատիկական մեթոդներ եւ մոդելավորում (միջանկյալ), գլոբալ եւ լոկալ ցանցեր, ցանցային արձանագրություններ (միջանկյալ), հաշվողական տեխնիկայի կառուցվածքի իմացություն (ներածական):

*Լեզուների իմացություն*՝ հայերենի ազատ տիրապետում, ռուսերենի եւ անգլերենի իմացություն ՝ մասնագիտական գրականություն ընթերցելու նպատակով:

**Մրցույթին դիմելու վերջնաժամկետը՝** 2012թ. նոյեմբերի 29-ը

**Աշխատավարձը՝** սկսած 300 000 դրամից (չհարկված)

**Այլ պայմաններ՝** *Թափուր երկու աշխատատեղերը հնարավոր է տեղափոխվեն Դիլիջան*

**Մրցույթին դիմելու ընթացակարգը.** Մրցույթին դիմելու համար անհրաժեշտ է գրանցվել համակարգում (գրանցվում են միայն այն դիմորդները, որոնք on-line եղանակով առաջին անգամ են դիմում մրցույթին) եւ լրացնել հարցաթերթիկը, այնուհետեւ ընտրելով համապատասխան մրցույթը, որին ցանկանում եք դիմել՝ սեղմել «ԴԻՄԵԼ» կոճակը եւ լրացնել Դիմումի ձեւը: Լրացուցիչ տեղեկությունների եւ պարզաբանումների համար կարող եք զանգահարել՝ 59-26-34 կամ 26-13 (ներքին):

***ՀՀ ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն***

Երեւանի «Աղամանդ» ապրանքա-հումքային բորսայի հարթակում դադարեցվել է «Արմենտել» ՓԲԸ-ի գույքի աճուրդային վաճառքը:

Աճուրդի վերսկսման մասին կտեղեկացվի լրացուցիչ:

Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել (010) 56-52-28 կամ այցելել ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե, կամ բորսայի կայք՝ www.borsa.am:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է արտաքին մրցույթ Ֆինանսական համակարգի կայունության եւ զարգացման վարչության սպառողների շահերի պաշտպանության եւ շուկայի վարվելակերպի բաժնի «մեթոդաբան-վերահսկող» թափուր աշխատատեղի համալրման համար:

**Աշխատանքի նպատակն է.** Ֆինանսական համակարգում սպառողների շահերի պաշտպանություն՝ բնակչության իրազեկվածության բարձրացման, ֆինանսական կազմակերպությունների շուկայական վարվելակերպի կարգավորման եւ վերահսկողության միջոցով:

**Աշխատատեղի հիմնական պարտականություններն են.**

Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի ստուգումների իրականացում:

Ֆինանսական կազմակերպությունների կողմից հրապարակվող տեղեկատվության մոնիտորինգ:

Սպառողների գրավոր բողոք-նամակներին եւ թեժ գծով բողոք-զանգերին պատասխանում:

Սպառողների շահերի պաշտպանության ոլորտում օրենսդրության մշակման աշխատանքներին մասնակցություն:

**Պահանջվող կրթությունը եւ գիտելիքների շրջանակը.**

*Բարձրագույն* տնտեսագիտական կրթության պարագայում՝ 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ՀՀ կենտրոնական բանկում կամ 2 տարվա աշխատանքային փորձ ֆինանսական ոլորտում:

*Բարձրագույն ոչ մասնագիտական* կրթության պարագայում՝ 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ՀՀ կենտրոնական բանկում կամ 3 տարվա աշխատանքային փորձ ֆինանսական ոլորտում:

*Գիտելիքներ հետեւյալ ոլորտներում*՝ շուկայական վարվելակերպ եւ սպառողների շահերի պաշտպանություն (խորացված), բանկային գործ (միջանկյալ), ֆինանսներ (ներածական), ապահովագրական գործ (միջանկյալ), արժեթղթերի շուկա (միջանկյալ), բանկային օրենսդրություն եւ նորմատիվային դաշտ (միջանկյալ), քաղաքացիական օրենսդրություն (միջանկյալ), հաշվապահական հաշվառում (ներածական), մակրոտնտեսագիտություն (ներածական), դրամավարկային եւ ֆինանսական վիճակագրություն (ներածական), միկրոտնտեսագիտություն (ներածական):

*Լեզուների իմացություն*՝ հայերենի գերազանց տիրապետում (հոդվածներ պատրաստելու, ուսումնակրթական ծրագրեր անցկացնելու նպատակով), ռուսերենի եւ անգլերենի լավ իմացություն:

*Անհրաժեշտ հմտություններ՝ Համակարգչով աշխատելու հմտություն (MS Office, տվյալների շտեմարաններ):*

**Մրցույթին դիմելու վերջնաժամկետը՝ 2012թ. նոյեմբերի 29:**

**Աշխատավարձը՝** 220 600 դրամ (չհարկված)

**Մրցույթին դիմելու ընթացակարգը՝** Մրցույթին դիմելու համար անհրաժեշտ է գրանցվել համակարգում *(գրանցվում են միայն այն դիմորդները, որոնք on-line եղանակով առաջին անգամ են դիմում մրցույթին)* եւ լրացնել հարցաթերթիկը, այնուհետեւ ընտրելով համապատասխան մրցույթը, որին ցանկանում եք դիմել՝ սեղմել «ԴԻՄԵԼ» կոճակը եւ լրացնել Դիմումի ձեւը: Լրացուցիչ տեղեկությունների եւ պարզաբանումների համար կարող եք զանգահարել՝ 59-26-34 կամ 26-13 (ներքին):

***ՀՀ ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն***

## ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2012 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ

| Հազար ՀՀ դրամ | 30 սեպտեմբերի 2012թ | 30 հունիսի 2012թ | 2011թ |
|---|---|---|---|
| Ակտիվներ | | | |
| Ակտիվներ արտաժույթով | | | |
| Կանխիկ դրամ | 5,009,137 | 5,367,131 | 5,013,113 |
| Բանկերում եւ այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ | 247,031,800 | 126,652,793 | 236,415,264 |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | 250,185,328 | 367,867,325 | 344,720,503 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | 1,646 | 1,646 | 1,646 |
| Մինչեւ մարման ժամկետը պահվող ակտիվներ | 201,544,151 | 193,845,911 | 137,340,298 |
| ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ | 60,254,562 | 83,278,868 | 76,489,346 |
| Այլ ակտիվներ | 1,069,063 | 996,936 | 1,228,086 |
| | **765,095,687** | **778,010,610** | **801,208,256** |
| Ակտիվներ տեղական արժույթով | | | |
| Վարկեր եւ հակադարձ հետգնման պայմանագրեր | 140,851,738 | 134,385,910 | 130,653,171 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | 127,242,639 | 124,553,634 | 121,527,307 |
| Մինչեւ մարման ժամկետը պահվող ակտիվներ | 2,721,564 | 2,646,831 | 3,265,916 |
| Հիմնական միջոցներ | 57,002,039 | 51,174,781 | 38,365,916 |
| Ոչ նյութական ակտիվներ | 763,928 | 795,595 | 622,741 |
| Այլ ակտիվներ | 4,505,749 | 5,253,295 | 6,251,461 |
| | **333,087,657** | **318,810,046** | **300,686,512** |
| **Ընդամենը ակտիվներ** | **1,098,183,344** | **1,096,820,656** | **1,101,894,768** |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ | | | |
| **Պարտավորություններ արտարժույթով** | | | |
| Ֆինանսական եւ այլ հաստատությունների ավանդներ եւ հաշիվների մնացորդներ | 48,473,176 | 41,440,280 | 104,346,523 |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ | 3,164,475 | 2,825,099 | 3,974,934 |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | 2,005,224 | 3,722,338 | 1,771,245 |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | 304,727,887 | 321,963,162 | 306,460,839 |
| Այլ փոխառություններ | 49,724,371 | 48,208,210 | 38,846,294 |
| Այլ պարտավորություններ | 172,507 | 219,153 | 153,901 |
| | **408,267,640** | **418,378,242** | **455,553,736** |
| Պարտավորություններ տեղական արժույթով | | | |
| Թղթադրամներ եւ մետաղադրամներ շրջանառության մեջ | 400,548,862 | 384,034,939 | 398,777,362 |
| Ֆինանսական եւ այլ հաստատությունների ավանդներ եւ հաշիվների մնացորդներ | 177,106,723 | 171,856,385 | 169,195,008 |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ | 101,108,214 | 105,204,284 | 75,722,418 |
| Այլ պարտավորություններ | 2,415,358 | 4,766,579 | 3,192,202 |
| | **681,179,157** | **665,862,187** | **646,886,990** |
| **Ընդամենը պարտավորություններ** | **1,089,446,797** | **1,084,240,429** | **1,102,440,726** |

| Հազար ՀՀ դրամ | 30 սեպտեմբեր 2012թ | 30 հունիսի 2012թ | 2011թ |
|---|---|---|---|
| Սեփական կապիտալ | | | |
| Թողարկված կապիտալ | 100,000 | 100,000 | 100,000 |
| Գլխավոր պահուստ | 17,389,049 | 17,389,049 | 17,389,049 |
| Լրացուցիչ կապիտալ | 107,531,884 | 107,531,884 | 107,531,884 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ | ( 1,226,601) | (1,327,087) | ( 1,218,959) |
| Կուտակված շահույթ/ վնաս | (115,057,785) | (111,113,619) | ( 124,347,932) |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | **8,736,547** | **12,580,227** | **(545,958)** |
| **Ընդամենը պարտավորություններ եւ սեփական կապիտալ** | **1,098,183,344** | **1,096,820,656** | **1,101,894,768** |

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 15.11.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: